ՄԻՇԵԼ ԴԸ ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍ

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՄԻՇԵԼ ԴԷ
ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍ

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ «ՏԱՊԱՆ» 1992

63.3(0)4
Ն 376

Կազմեց և մեկնաբանեց
ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ

Ֆրանսերենից թարգմանեցին՝
ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ
ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ
ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆԸ

ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍ ՄԻՇԵԼ ԴԸ

Երրորդ համաշխարհային պատերազմը և Հայաստանը: Մարգարեություններ, գուշակություններ:

Երևան, «Տապան», 1992, 96 էջ:

Գրքում առաջին անգամ հայ ընթերցողին են ներկայացվում Միշել դը Նոստրադամուսի (1503—1566 թթ.) մարգարեություններն ու գուշակությունները՝ կից մեկնաբանություններով:

«ՏԱՊԱՆ» ԼՀ
© «ՏԱՊԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Թարգմանության համար

ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Իմաստուն մարդը կիշխի մոլորակների հեռաղդեցությանը, որոնք բոլորովին էլ իրենց հատկություններով անհրաժեշտաբար չեն ներգործում երկրային մարմինների վրա. այլ միայն նրանց ուղղություն տալով, ուստի և այդ առումով մարդս պետք է իրեն զգուշավոր ու զուսպ պահի»։

Պտղոմեոս

Միշել դը Նոստրադամուսի (1503—1566 թթ.) մարգարեությունները գրվել են 16-րդ դարում: Հեղինակի գլխավոր նպատակն է եղել պատկերել 20-րդ դարը՝ իր տեսիլքների առանցքային առարկան, մի ժամանակաշրջան, որին վերաբերող քառյակներն ընդգրկում են «Մարգարեությունների գրքի» ավելի քան երկու երրորդ մասը: Հեղինակը դեռ այն ժամանակ գիտեր և մատնանշում էլ էր, որ իր գրքի խորհուրդները հասկացվելու և բացահայտվելու են այդ նույն 20-րդ դարում: Ահա թե նա ինչ է գրում իր Սեզար որդուն ուղղված նամակում. «Եթե ես հայտնեի այն, ինչ կատարվելու է նրանց հետ ապագայում, ապա դա այնքան տարօրինակ կթվար կառավարողների, աղանդավորների, կուսակցականների ու հավատացյալների լսողությանը, որ ի վերջո կդատապարտեին այն, ինչ հնարավոր կլինի տեսնել ու հասկանալ գալիք դարերի մեջ... (20-րդ դար)»:

Ինչ վերաբերում է Նոստրադամուսի մարգարեությունների ժամանակային սահմանին, ուսումնասիրողներց ոմանք այն գտել կամ հայտնաբերել են աստղաբաշխական հաշվարկների միջոցով, ոմանք առավել կամ պակաս ճշգրտության մաթեմատիկական «բանալիների», ուրիշներն էլ՝ կաբալայի օգնությամբ և այլն, և այլն: Իրականում Նոստրադամուսի մարգարեությունը գալիս-հասնում է մինչև յոթերորդ հազարամյակի վերջը և այստեղ էլ կանգ է առնում՝ համաձայն աստվածաշնչյան ժամանակագրության, այն է՝ Ձկների դարաշրջանի վերջում, քրիստոնեական դարաշրջանի մոտավորապես 2.000 թվականին: Նոստրադամուսը թաքցրել է այդ տվյալը մի խորամանկ հաշվարկի հետևում, որը կարելի է վերականգնել միմիայն ելակետ ունենալով աստվածաշնչյան ժամանակագրությունը, որի մասին նա խոսում է

Ֆրանսիայի թագավոր Հենրի Երկրորդին գրած նամակում, ուր մասնավորապես ասվում է.

«Առաջին մարդը՝ Ադամը եղավ Նոյից առաջ»	1242 տարի
«Նոյից հետո գալիս է Աբրահամը»	1080 տարի
«Հետո գալիս է Մովսեսը»	515 տարի
«Դավիթի և Մովսեսի ժամանակների միջև»	570 տարի
«Դավիթի և Մեր Փրկիչ Հ. Ք.-ի ժամանակների միջև»	1350 տարի
Ամբողջ ժամանակահատվածը Ադամից մինչև Հ. Ք.՝	4757 տարի:

Այսպես, Սեզարին ուղղված նամակում Նոստրադամուսը գրում է. «Ես կազմեցի մարգարեության գրքեր... որոնք իրենցից ներկայացնում են անընդմեջ կանխագուշակումներ՝ այսօրվանից երբ ես գրում եմ (1555 թ.) սկսած մինչև 3797 թվականը»: 1555-ից մինչև 3797 թ. եղած ժամանակահատվածը 2242 տարի է: Եթե ժամանակային այս ընդգրկումը ավելացնելու լինենք արդեն վերևում վկայակոչված աստվածաշնչյան ժամանակագրության տվյալներին, ապա կստանանք 4757+2242=6999 թիվը վերոհիշյալ ժամանակագրության, կամ քրիստոնեական ժամանակագրության 1999 թվականը՝ Նոստրադամուսի կողմից պարզորոշությամբ տրված մի տարեթիվ՝ որպես Նեռի պատերազմների մեկնակետ.

X, 72

Հազար ինը հարյուր իննսունինը (1999) թվականի յոթերորդ ամսին
Մի զարհուրելի առաջնորդ օդային ուղիներով կգա
Հիշողության մեջ վերականգնելու Անգումուայի Մեծ նվաճողին:
Ավելի վաղ և հետագայում Մարսը (պատերազմը) հաջողությամբ կիշխի:

Նոստրադամուսը պարզորոշ արտահայտությամբ միայն շատ քիչ տարեթվեր է նշել: Բացի 1999-ից, Ֆրանսիայի թագավոր Հենրի Երկրորդին հասցեագրած նամակում նա գրում է. «Եվ սա (Միապետությունը) կտևի մինչև հազար յոթ հարյուր իննսուներկու (1792) թվականը, որը կկարծեն, թե դարի վերանորացումն է լինելու»:

Մարգարեի կողմից տեսիլքից բխեցվող գրավոր տարեթվերի հիշատակությունը մեզ բերում-հանգեցնում է այն եզրակացությանը, որ այդ երկու տարեթվերը շատ ավելի մեծ կարևորություն ունեն, քանի որ նրանք որպես մեկնակետ ու

ավարտակետ են հանդես գալիս. 1792-ը* ներկայացնում է քրիստոնեական դարաշրջանի ավարտական փուլի (Զկների դարաշրջանի) սկիզբը, և 1999-ը՝ բոլոր իսկ ավարտը՝ այսպիսով բացելով հայտնութենական երկունքի ցավերով բռնված Ջրհոսի դարաշրջանը, որն անհրաժեշտաբար մարդկությանը պիտի դրդի վերջնականապես դադարեցնելու ավելի ու ավելի կործանարար ու անհաբեկիչ պատերազմական սպառազինությունների հայտնաբերմանը հետամուտ իր գործունեությունը:

Հանգամանորեն ներկայացնելով 20-րդ դարի առաջին երկու աշխարհամարտերի ցնցող ու մարդախոշոր պատկերները, անդրադառնալով պատերազմական գործողությունների ընթացքին ու նրանց ողբերգականորեն իրապատում վախճանին՝ Նոստրադամուսը անցնում է Երրորդ համաշխարհային պատերազմի մանրամասնված նկարագրությանը: Նա մարգարեանում է, որ Երրորդ համաշխարհայինը «արևելյան ծագում» է ունենալու (1,9), և այն տևելու է «3 տարի և 7 ամիս» (IV, 95), ըստ ուսումնասիրողների և մեր իսկ հաշվարկների՝ 1995 թ. մարտ/ապրիլ ամիսներից սկսած մինչև 1998 թ. նոյեմբերը: Պատերազմի մեջ են ներքաշվում երկու հիմնական ռազմական խմբակցություններ. մի կողմից՝ Ռուսաստանը (Սլավոնական աշխարհը) և Ասիայի մուսուլմանական երկրները, մյուս կողմից՝ Հայաստանը և քրիստոնեական Եվրոպան, որոնք Ամերիկայի Միացյալ Նահանգների (վերջինիս համար Նոստրադամուսը գործածում է «Ամերիկ» անվանաձևը, թեև նա ապրել է Ամերիգո Վեսպուչիից շատ առաջ) հետ միասին կազմում են երկրորդ պատերազմական ուժը: Ռուս-մուսուլմանական դաշնակցության կողմից Արևմուտքի և Ճապոնիայի վրա նետված հրթիռները ազդարարում են Երրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը: Պատերազմական գործողությունների սկզբնական փուլում հիմնական ընդհարումները տեղի են ունենում 45-րդ և 48-րդ զուգահեռականների միջև, ուր կոնկրետ անուններով Նոստրադամուսը և նրա երկը մեկնաբանողները հիշատակում են երեք գլխավորագույն քաղաքներ՝ որպես պատերազմական գործողությունների կարևոր կենտրոններ, դրանք են «Բորդոն, Ժենը և Բաքուն» (VI, 97):

Պատերազմի սկզբնական շրջանում ռուս-մուսուլմանական միացյալ ուժերը իրար ետևից զավթում են նախ Գերմանիան, Ավստրիան, Անգլիան (ընդ որում՝ վերջինիս ծովի տակից հարվածներ հասցնելով. սուզանավե՞ր), ապա՝

---

* *Ֆրանսիական Առաջին Հանրապետության հռչակման տարեթիվը:*

հեղափոխական Իտալիան: Ի դեպ, որպես սլավոնա-մուսուլմանական միացյալ զինուժի գլխավոր հրամանատար Նոստրադամուսը հիշատակում է ծագումով հայաստանցի մի զորահրամանատարի (Duc d'Arménie) (V, 94), որը, Կարմիր բանակի գլուխն անցած, մեկը մյուսի հետևից զավթում է արևմտաեվրոպական երկրները: Այնուհետև ռուս-մուսուլմանական բանակները Սև ծովով ու ցամաքով պատերազմ են սանձազերծում Դալմատիայի (Հարավսլավիա) դեմ (IX, 60, IX, 30): Արդյունքում՝ հարավսլավական «ամենամեծ օդային տորմիղը, դուրս գալով Զարայի նավահանգստից, կողոպտում ու ավարառության է ենթարկում Թուրքիայի երկու երրորդը» (VII, 83): Մյուս կողմից՝ պատերազմ է ծագում Հունաստանի և Թուրքիայի միջև (IV, 38), Ֆրանսիան ռմբակոծում է Ստամբուլը (VI, 85): Արևմտյան խմբակցության բանակների պատասխան հաջողություններից կատաղած՝ ռուս-մուսուլմանական ուժերը հարձակման են անցնում Ֆրանսիայի միջերկրածովյան տարածքներում (III, 82) և, ի վերջո, Արևմուտքը, ծանր պարտություն է կրում Միջերկրական ծովում (VIII, 21) և Պիրենեյան լեռներում (IV, 94): Վերջապես 1996 թ., հավաքագրելով իր ուժերը, Արևմուտքը հակահարձակման է անցնում Միջերկրականում, Պիրենեյան լեռներում և Լանգրդոքում (հարավարևմտյան Ֆրանսիա): Արդյունքում՝ Փարիզը և Ժենը կործանվում են: Կարմիր վարչակարգը «3 տարի և 70 օր» հաստատվում է Ֆրանսիայում, որի տապալումը տեղի է ունենում միայն պատերազմի ավարտին մոտ, որով և «վերջ է տրվում հանրապետական համակարգին և ապացուցվում է Ժան-Ժաք Ռուսոյի սոցիալիստական գաղափարների զառամությունը» (I, 7): Ռուս-մուսուլմանական դաշնակցությունը փլուզվում է (III, 95): Արևմուտքը մեկը մյուսի հետևից սկսում է հաղթանակներ տոնել:

«Ֆրանսիայի արքաներից վերջինն ու հզորագույնը», ըստ Նոստրադամուսի Հենրի V կամ Մեծ Լորրան (կամ՝ Ֆեբուս) մականվանյալ, Ալպյան լեռներում եղող ընդդիմությունը հաղթահարելով շարժվում է դեպի նվաճված Իտալիա, բայց զինուժի սակավության պատճառով սկզբնական շրջանում այնտեղ մուտք գործել չի կարողանում՝ Հայաստանի տարածքում գտնվող մեծաթիվ ուժերի պատճառով (V, 50): Արևմտաեվրոպական բանակների մի ստվար քանակություն հայկական զորամիավորումների հետ միասին պատերազմ էր մղում Հայաստանի սահմանների պաշտպանության նպատակով.

«Բանակը կկուտակվի իրանա-հայկական սահմանին,

Արաքսի ափին»*: Ճակատամարտի ընթացքում մուսուլմանական զորքերը ջախջախիչ պարտություն են կրում (III, 31): Ընդ որում, ըստ Նոստրադամուսի, պատերազմը մղվելու է նաև պատմական Հայաստանի տարածքներում՝ Սև ծովի ափերին (Տրապիզոն, Ռիզե), ուր «Հենրի V-ը վերջ կտա ռուսական ծովային զորությանը», «Մեծ Լորրանը (Լորրան Ֆաբիուս) կլինի երաշխավորը Սև ծովի սահմանների» (VII, 24): Ի դեպ, Նոստրադամուսի բոլոր մեկնիչները, այդ թվում՝ նաև նրա երկի լավագույն գիտակ Ժան-Շարլ դը Ֆոնտբրյունը, միաբերան մեկնում են, որ տվյալ դեպքում «խոսքը մի պետության մասին է՝ Փոքր Ասիայի հյուսիսային մասում, Սև ծովի ափերին, այդ ժամանակվա Հայաստանի տարածքում»**: Ասվածից կարելի է ենթադրել, որ մինչև Երրորդ աշխարհամարտը կամ գոնե պատերազմի սկզբում իրագործված են լինելու 1920 թ. Սևրի պայմանագրի դրույթները և Հայաստանը լինելու է ծովային տերություն:

Երրորդ համաշխարհայինում Արևմուտքի հաղթանակի կապակցությամբ Նոստրադամուսը նախանշան 8-ում մարգարեանում է.

Երբ Զրհոսի դարաշրջանը (1999 թ.) մերձենա, սատանան էլ շուտ գալով կհեռանա,
Եվ խոչընդոտ կհարուցվի մեծ պատերազմի կրակի առաջ՝
Ռուսաստանից մինչև ամբարտավան երկրները մուսուլմանական,
Եվ մտքի ազատություն Արևմուտքը կունենա:

Նոստրադամուսը, այսպիսով, իր հեռահաբ հայացքով շրջել է մի ամբողջ ժամանակաշրջանի վրայով, որը ձգվում է 1792 թվից՝ արևմտյան քաղաքակրթության ավարտական փուլի սկզբնավորման տարուց, մինչև 1999 թվականը, որն, իսկապես ասած, խորհրդանշում է նրա վերջնական ավարտը:

Հայտնութենական այս համայնապատկերում մեզ համար որպես հույս մնում է լոկ մարգարեական հաղորդումի այն կերպը, որը մարդուս վեր է պահում իր խելագար բնազդների ոլորտից: Ովքեր էլ լինեն Հին կամ Նոր կտակարանի մար-

---

* *Հետաքրքիրն այն է, որ Նոստրադամուսը, իր նախասիրած դրաշրջանության հնարանքից օգտվելով, «Իրան» տեղանվան փոխարեն հիմնականում գործածում է «Նիրա» կամ «Նարի» ձևերը՝ դրանով իսկ կարծես ակնարկելով Իրան-Նարիի երկրամասի նույնականությունը:*

** Jean Charles de Fontbrune. Nostradamus historien et prophete, Monaco—Paris, 1981, p. 500.

գարեները, ով էլ լինի Քրիստոսը կամ Միշել դը Նոտրդամը, նրանք բոլորը միաբերան խոսում են «Արքայության» գալըստյան մասին, ուր իշխելու է, վերջապես, տիեզերապարփակ խաղաղությունը մարդկանց միջև:

«Որովհետև այն ժամանակը մեծ նեղություն կլինի, որի նմանը աշխարհքիս սկզբից մինչև հիմա չեղավ, և ոչ էլ երբեք կլինի: Եվ եթե այն օրերը չկարճացվեին, ոչ մի մարմին չէր փրկվիլ, բայց ընտրվածների համար այն օրերը կկարճացվին... Որովհետև սուտ քրիստոսներ և սուտ մարգարեներ վեր կկենան, և մեծ նշաններ և հրաշքներ կտան մինչև որ եթե կարելի լիներ **ընտրվածներին էլ կմոլորեցնեին...** Որովհետև ինչպես կայծակը դուրս է գալիս արևելքից և երևում մինչև արևմուտք, այնպես էլ կլինի մարդի Որդուն գալուստը*»:

Այլ կերպ ասած՝ Քրիստոսը կվերադառնա մարգարեաբար ասված ժամանակների վերջում՝ կարգ հաստատելու թնդանոթների վաճառականների մեջ, ինչպես որ նա այդ բանը իր ժամանակին հաստատել էր Տաճարի վաճառականների մեջ: Եվ սակայն, ուր որ է բացվելու է, մի քառասուն տարուց, յոթերորդ հազարամյակը կամ Զրհոսի դարաշրջանը, որը մարդկությանը կբերի տիեզերապարփակ խաղաղություն և ծաղկում ավելի շատ հոգևոր, քան նյութական:

Իր հաղորդումի՝ մարդկության համար այս դրական հեռանկարի կարևորությունը պարփակված է Նոստրադամուսի՝ իր Սեզար որդուն գրած նամակի հետևյալ տողերում.

«Որովհետև համաձայն երկնքի նշանների** Ոսկեդարը կվերադառնա հեղափոխական մի ժամանակաշրջանից հետո, որն ամեն ինչ շուռ կտա վերից վար՝ դեպի որը մոտենում է աշխարհը, և այժմվանից սկսած, երբ ես գրում եմ, կանցնի հարյուր յոթանասունյոթ (177) տարի երեք ամիս և տասնմեկ օր՝ իր ետևից բերելով գաղափարների ու բարքերի այլասերում, պատերազմներ և մի երկարատև սով...»:

Մարգարեի մատնանշած ժամկետը ավելացնելով 1555 թ. մարտ ամսին, այն տարեթվին, երբ նա գրում էր նամակը Սեզարին, համընկնում է Ժան-Ժաք Ռուսոյի՝ 1732 թվականին առաջին անգամ Փարիզ կատարած այցելությանը: Իսկ Ժան-Ժաք Ռուսոյին, բառացի անվանումով՝ «Ռուսո», Նոստ-

---

* *Ավետարան ըստ Մատթեոսի, գլ. ԻԴ, 21, 22, 24, 27։*

** *Արեգակի անցումը Ձկների համաստեղությունից Ջրհոսի համաստեղություն ներկայացվում է առատության եղջյուրի միջոցով, ջրերում ապրող ձկները հեղափոխության խորհրդանիշն են։*

ռադամուսը ներկայացնում է որպես 20-րդ դարի դրամատիկ ու ողբերգական իրադարձությունների գլխավոր պատասխանատու: Նրա ուտոպիական գաղափարները, որ վերցվեցին 19—20-րդ դարերի մտածողների կողմից (Պրյուդոն, Սեն-Սիմոն, Կարլ Մարքս), սոցիալիստական գաղափարների քողի տակ բերին-հանգեցրին նացիոնալ-սոցիալիզմի գաղափարին:

Եվ սակայն, ըստ Նոստրադամուսի մենք՝ 20-րդ դարավերջի մարդիկս, ապրում ենք աշխարհներից մեկի վերջում և ոչ թե ընդհանրապես աշխարհների վերջում, ինչպես որ դրանում մեզ ձգտում են համոզել հիվանդագին այլասերվածության դրույթի որոշ ջատագով շահագործողները: Այս մի քաղաքակրթության մահը, բազում ուրիշների թվում, կհանգեցնի մեկ ուրիշ, նոր քաղաքակրթության ծննդյանը՝ ազատագրված նախորդների մոլորություններից ու աղճատված այլասերվածությունից:

Վերջացնելով՝ ասենք, որ Նոստրադամուսի մարգարեությունը, ինչպես որ Հին կտակարանի մեծ մարգարեներինը, ինչպես Քրիստոսինը կամ Հայտնությունը, այնուամենայնիվ, բոլորովին էլ մարդու դեմ ուղղված շարունակաբար կրկնվող անընդհատ աղետների կամ նզովքների հիվանդագին ու ախտահարույց տեսություն չէ, այլ հույսի մի ավետում: Ի՞նչ կլիներ, սակայն, մարդուս ապագան առանց այս աստվածային ավետման: Առանց Աստծո մարդ-էակը՝ երկրպագողը «Բանականություն» կոչվող աստվածուհու, պետք է, մեզ դա խոստացել են, հաստատեր աշխարհիս երեսին Մարդու Իրավունքների թագավորությունը: Այս՝ այսպես կոչված աշխարհիս վրա հաստատված նոր կարգուկանոնի երկու դարերից հետո հարկավոր կլիներ անազնվության մի գերմեծ պարբերաշափ՝ հավակնելու համար այն բանին, թե մարդս, նրա բանականությունը և հատկապես նրա հպարտությունը թեկուզ դույզն-ինչ բարելավել են ժողովուրդների բախտը նյութական բարեկեցության բնագավառում իրենց ձեռք բերած հետևողական հաջողություններով:

Աշոտ Ալեքսանյան

ՊՐՆ. ՄԻՇԵԼ ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍԻ ՆԱԽԱԲԱՆԸ ԻՐ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՈՒՂՂՎԱԾ ՍԵԶԱՐ ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍԻՆ

ԿՅԱՆՔ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Քո ուշացած գալուստը, որդիդ իմ Սեզար Նոտրդամ, ինձ ստիպեց երկար ժամանակ անցկացնել գիշերային անընդմեջ արթնությամբ՝ նախանուդ մահից հետո մարդկանց (հատկապես ֆրանսիացիների) ընդհանուր շահի համար քեզ գրավոր փոխանցելու և քեզ թողնելու այս հուշագրությունը, որ ձեռնարկեցի այն բանից հետո, երբ աստվածային զորությունն ինձ պարգևեց աստղերի օգնությամբ ըմբռնելու կարողություն: Ինչպես նաև այն բանից հետո, երբ անմահ Աստծուն ցանկալի եղավ, որ դու չծնվեիր այս երկրամասում (Պրովանսում), իսկ այստեղ ես ցանկանում եմ խոսել ոչ թե այն տարիների մասին, որոնք դեռ գալու են, այլ քո զինվորական ամիսների մասին, երբ քո տկար մտքով դու ընդունակ չես լինի հասկանալու, որ իմ մահից հետո ես ստիպված կլինեմ լքել քեզ. նկատի ունեցիր, որ ես հնարավորություն չունեմ քեզ գրավոր թողնելու այն, ինչ կոչնչանա ժամանակի (1555 թ.) անարդարության պատճառով: Որովհետև դու կժառանգես գաղտնագրված կանխագուշակումը, որի բանալին փակված կլինի իմ սրտում: Նկատի ունեցիր նաև, որ այստեղ որոշակի ներկայացվող անցքերը ստույգ չեն, և որ ամեն ինչ ղեկավարվել ու կառավարվել է Աստծո անսահման զորությամբ, որը մեզ ներշնչում է, ոչ թե զմայլանքով կամ ցնորական մղումներով, այլ աստղաբաշխական հիմնավորումներով. այսպիսով, կանխագուշակումներն արվել են՝ ներշնչված միայն աստվածային կամքով և մասնավորապես՝ մարգարեության ոգով: Որքան վաղուց է, ինչ տարբեր եղանակներով շատ ավելի վաղ ես կանխագուշակել եմ այն, ինչ

կատարվել է հետագայում, այն էլ՝ առանձին վայրերում՝ ամբողջը վերագրելով աստվածային առաքինության և ներշնչման գործունեությանը, ինչպես մյուս երջանիկ ու դժբախտ անցքերի դեպքում, որոնց կանխագուշակումը առաջ է անցել դրանց անակնկալ զարգացումից, և որոնք հետո տեղի են ունեցել աշխարհի տարբեր լայնություններում: Բայց ես ուզեցի լռել և թողնել իմ այդ գործունեությունը ոչ միայն ներկա ժամանակի (Հավատաքննության), այլև ապագա ժամանակների ավելի մեծ մի հատվածի անարդարության պատճառով. չուզեցի գրի առնել, որովհետև կառավարությունները, աղանդներն ու երկրները ենթարկվելու են այնքան հակադիր փոփոխությունների և գտնվելու են իրենց ներկային ստրամագծորեն հակառակ այնպիսի վիճակում, որ եթե ես հայտնեի այն, ինչ կատարվելու է նրանց հետ ապագայում (պարզորոշ ենթադրվող), ապա կառավարողների, աղանդավորների և կրոնավորների ու հավատավորների երևակայության լսողությանը դա այնքան տարօրինակ կթվար, որ ի վերջո կդատապարտեին այն, ինչ հնարավոր կլինի տեսնել և հասկանալ գալիք դարերի մեջ (20-րդ դար): Պետք է նկատի ունենալ նաև ճշմարիտ փրկչի այն իմաստալից խոսքը, թե՝ **Մի՛ տվեք շներին այն, ինչ սուրբ է, և մի՛ նետեք մարգարիտները խոզերի առաջ՝ վախենալով, թե չլինի՞ դրանք ոտնակոխ արվեն և հետո շուռ գան ձեր դեմ:** Այս գիտակցությամբ ես խզեցի իմ լեզուն ժողովրդականից և գրիչս՝ թղթից, բայց հետո ցանկացա տարածել իմ հայտարարությունը կոմունայի (կոմունիզմի) գաղտնության մասին, գաղտնախորհուրդ և հանելուկային դարձվածներով պատմել գալիք, նաև ամենամոտ իրադարձությունների մասին, և այն, ինչ ես շարադրել եմ՝ մարդկային հասարակության մեջ տեղի ունեցող որոշ տեղաշարժեր, չի վրդովի նուրբ լսողությունը, որովհետև ամբողջ մարգարեությունը գրված է մանվածապատ մի եղանակով. և մանվածապատ է այն աստիճան, **որ անհասկանալի եղավ գիտնականներին և իմաստուններին, հզորներին ու արքաներին, բայց հասկանալի է նվաստներին ու խոնարհներին.** անմահ Աստծո օգնությամբ՝ նաև մարգարեներին, որոնք ստացել են կանխատեսման ոգին, որով նրանք տեսնում են հեռավոր երևույթներ և հա-

սու դառնում ապագա իրադարձությունները կանխատեսելուն. որովհետև ոչինչ չի կարող կատարվել առանց նրա, այնքան մեծ է զորությունն ու բարությունը այն անհատների համար, որոնց դրանք տրվել են, որ այն ընթացքում, ինչ նրանք խորհում են իրենք իրենց, այդ անհատները ենթակա են ուրիշ ազդեցությունների, որոնք բոլորն էլ ծագում են մի բարի ոգուց. մարգարեական այս ջերմությունն ու զորությունը հասնում են մեզ, ինչպես արևի շողերը, որոնք ափում են իրենց ազդեցությունը պարզ ու բարդ մարմինների վրա: Ինչ վերաբերում է մեզ՝ մահկանացուներիս, մենք անկարող ենք մեր հասարակ գիտելիքներով ու մեր մտքի վայրիվերումով ըմբռնելու Արարիչ Աստծո գաղտնի խորհուրդները: **Որովհետև մեզ տրված չէ ըմբռնելու ոչ ժամանակը և ոչ էլ ակնթարթները,** և այլն: Այն աստիճան, որ ապագայի գուշակները կարող են այժմվանից նկատվել, քանի որ Արարիչ Աստված կամեցավ նրանց բացահայտել նշանակված պատկերներով, ապագայի որոշ գաղտնիքներով հանդերձ, համաձայն բանական աստղագիտության, ինչպես անցյալի գաղտնիքների դեպքում, երբ որոշակի զորություն և ցանկալի կարողություն տրվել էր դրանց միջոցով, երևում էր ինչպես կրակի ցոլքը, որը, դրանք գուշակին ներշնչելով, նրան մղում էր գնահատելու աստվածային ու մարդկային ներշնչումները: Քանի որ Արարիչն ավարտում է աստվածային ստեղծագործությունները, որոնք ամբողջովին բացարձակ են, միջինը Հրեշտակների մեջ է, երրորդը՝ չարքերն են: Սակայն, որդյակ իմ, այստեղ ես քեզ հետ խոսում եմ չափազանց մշուշապատ մի եղանակով: Իսկ ինչ վերաբերում է գաղտնատեսական մարգարեություններին, դրանք ստացվում են կրակի նուրբ ոգուց, որը, ասես արթմնի վիճակում, ընկալում է առաջ բերում աստղերից ամենաբարձրի դիտարկման միջոցով, այնպես, ինչպես հրապարակումների դեպքում, երբ անակնկալ հրապարակվում են գրառումները՝ առանց վախենալու անխիղճ մի շատախոսությամբ խոցված լինելուց, քանի որ ամեն ինչ բխում էր մեծ և անմահ Արարչի աստվածային զորությունից, որից սկիզբ է առնում ողջ բարությունը: Առայժմ, որդյակ իմ, քանի այստեղ ես քեզ չեմ տվել մարգարեի անունը, ես չեմ ցան-

կանում ինձ վերագրել ներկայի համար նույնքան բարձր մի տիտղոս, որովհետև ով այսօր մարգարե է համարվում, հնում կոչվում էր պայծառատես. որովհետև մարգարեն, ճշմարիտն ասած, որդյակ իմ, նա է, ով հեռավոր երևույթները տեսնում է ողջ արարման բնական ճանաչմամբ: Եվ կարող է պատահել, որ մարգարեն, մարգարեության կատարյալ լույսի միջոցով, մի պարզ ձևով երևան հանի աստվածային ու մարդկային գործերը, որովհետև դա չի կարող արվել այլ կերպ, եթե նկատի ունենանք, որ ապագայի կանխագուշակման իրականացումները ժամանակի մեջ հեռուն են ձգվում: Քանի որ անիմանալի են Աստծո գաղտնիքները, և արդյունավոր ողջամտությունը հասնում է բնական գիտելիքների մի ընդարձակ սահմանի, իր ամենաանմիջական սկիզբն առնելով ազատ կամքի մեջ՝ երևան է բերում երևույթներ, որոնք բացահայտված լինելու համար չեն կարող ինքնաբերաբար բերել տալ այդ ճանաչողությանը ոչ մարդկանց մեկնաբանություններով, ոչ էլ ճանաչողության մեկ այլ եղանակով կամ կարծես թե երկնակամարի տակ քողարկված գիտությամբ՝ փաստացի ներկայից մինչև ողջ հավերժությունը, որ ընդգրկում է ժամանակի համընդհանրությունը: Բայց այս անտրոհելի հավերժության շնորհիվ մի հզոր, ընկնավորակերպ հուզումով իրադարձությունները իմացվել են երկնքի շարժման միջոցով: Ես այս ասում եմ, որդյակ իմ, միայն այն բանի համար, որ դու լավ հասկանաս, որ այս նյութի իմացությունը դեռևս չի կարող տպավորվել քո տկար ուղեղում, ասել է թե՝ ապագայի շատ հեռավոր իրադարձությունները հասանելի չեն բանական էակի ճանաչողությանը, իսկ եթե այդ իրադարձություններն այնուամենայնիվ հասանելի են մտավոր էակի իմացությանը, ապա նրա համար ներկա և հետագա իրադարձությունները ոչ չափազանց քողարկված են, ոչ էլ չափազանց բացահայտ, իսկ այդ իրադարձությունների վերջնական իմացությանը չի կարելի հասնել առանց աստվածային ոգեշնչման՝ նկատի ունենալով, որ մարգարեական ողջ ներշնչման հիմնական աղբյուրը Արարիչ Աստծո հույզն է, ապա նոր՝ բարեպատեհությունն ու բնությունը: Եվ քանի որ չտարբերակված իրադարձությունները առանց խտրականության տեղի

են ունեցել կամ՝ ոչ, կանխագուշակումն իրողություն է դառնում այն չափով, որչափով դա կանխատեսվել է: Որովհետև բանականության ծնունդ ըմբռնումը չի կարող ձեռք բերվել ոգեհարցության եղանակով, այլ միայն՝ կատարյալ ձայնով, կենդանակերպի օգնությամբ, թույլ ցոլքի միջոցով, որի մեջ հետագա իրադարձությունների մի մասը կբացահայտվի: Եվ նաև, որդյակ իմ, ես քեզ խնդրում եմ չտրամադրել երբեք քո միտքը այնպիսի երազանքների և ունայնությունների, որոնք չորացնում են մարմինը և իրենց հետևից բերում հոգու կորուստ՝ խռովելով մեր թույլ զգացումները, և հատկապես մի՛ տրվիր ունայնությանը ամենանողկալի մոգության, որը դատապարտվել է անցյալում սրբազան գրությունների և աստվածային Կանոնների կողմից, որոնցում բացառված է դատողական Աստղագուշակության ըմբռնումը, իսկ այդ Աստղագուշակության միջոցով, աստվածային ոգեշնչման և բացահայտման օգնությամբ, շարունակական հաշվարկի միջոցով ես գրավոր կազմել եմ իմ մարգարեությունները: Եվ վախենալով այն բանից, որ ոգեհարցության փիլիսոփայությունը չէր դատապարտվել, ես չցանկացա ցույց տալ նրանց սարսափելի ինքնավստահությունը՝ վախենալով նաև, որ երկար դարերի ընթացքում թաքցված մի շարք գրքեր հայտնի չեն եղել, և երկյուղ կրելով այն բանից, ինչ կարող էր դրանից բխել, այդ գրքերը կարդալուց հետո ես դրանք պահ տվի Հրաբխին (ես դրանք այրեցի), և քանի դեռ կրակը լափում էր դրանց, օդը լիզող բոցը արձակում էր մի անսովոր լույս՝ ավելի պայծառ, քան սովորական բոցի լույսը, իբրև մի կրակի ցոլք, որ առաջանում է փայլատակող համաղեստից՝ անակնկալ լուսավորելով տունն այնպես, կարծես այն հանկարծակի բռնկված լիներ: Ահա թե ինչու, որդեսգի այսուհետև դուք չմոլորվեք՝ ջանադրաբար որոնելով կատարյալ փոխակերպումը՝ ինչպես հանրապետական, այնպես էլ միապետական, որը մշուշապատ ոգեհարցություններով հողի մեջ կթաղի ամենամաքուր բաները, ես դրանք մոխրի վերածեցի: Իսկ ինչ վերաբերում է այն դատողությանը, որն ամբողջանալու է երկնային բանականության օգնությամբ, ես կձգտեմ այն քեզ հայտնի դարձնել. հետու վանելով երևվակայական պատկերացումները՝ դատողությամբ կարելի է

ճանաչել հետագա իրադարձությունները, որոնք գերբնական ներշնչմամբ, ըստ երկնային մարմինների դասավորության կբացահայտվեն, քո առաջ ցուցադրելով մինչև իսկ առանձին տեղավայրերի անունները, քեզ հայտնի կդառնան վայրերը և ժամանակի մի հատվածը՝ ծածուկ յուրահատկություն ունեցող մի առաքինության միջոցով, այսինքն՝ աստվածային զորության և ունակության միջոցով, որոնց առկայությամբ երեք ժամանակները (անցյալ, ներկա, ապագա) ընդգրկված են Ժամանակի մեջ, որի ընթացքը կապված է անցյալ, ներկա և գալիք դեպքերին. **Քանի որ ամեն ինչ պարզ է և ակնհայտ,** և այլն: Ահա թե ինչու, որդյակ իմ, դու կարող ես հեշտությամբ, չնայած քո ջահել մտքին, հասկանալ, որ իրադարձությունները, որոնք պետք է տեղի ունենան, կարող են կանխատեսվել գիշերային և երկնային լուսատուների միջոցով, որոնք բնական են, և մարգարեական բանականությամբ. ես ոչ թե ցանկանում եմ ինձ մարգարեի կոչում ու գործունեություն վերագրել, այլ ուզում եմ ասել, որ գործել եմ ի հայտ եկած ոգեշնչումով, որպես մի մահկանացու, որի ըմբռնողությունը պակաս հեռու է երկնքից, քան ոտքերը՝ երկրից: **Ես չեմ կարող ոչ ստել, ոչ խաբել և ոչ էլ հիմարացնել,** չնայած այս աշխարհում չի լինի որևէ մեկը, որ ավելի շատ մեղքեր ունենա ու ենթակա լինի մարդկային բոլոր դառնություններին, քան ես: Բայց շաբաթվա մեջ ժամանակ առ ժամանակ գտնվելով ասես ցնորական վիճակում, մի երկար հաշվարկով, որը գիշերային հետազոտություններին հաճելի բույր էր տալիս, ես կազմեցի մարգարեության գրքեր, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է աստղագիտական հարյուր քառյակ, որոնք ես ցանկացել եմ շարադրել փոքր-ինչ մանվածապատ եղանակով, և որոնք իրենցից ներկայացնում են անընդմեջ կանխագուշակումներ այսօրվանից մինչև 3797 թ. ընկած ժամանակահատվածի համար: Հնարավոր է, որ սա ոմանց մղի ուշադրությունը բևեռելու դրանցից մի քանիսի վրա՝ տեսնելով ժամանակի մի այդքան ընդարձակ հատված, և մարգարեությունը կբացահայտվի և կներառվի Հանրապետության գոյատևման ողջ ընթացքի շրջանակներում. և իրադարձությունները, որդյակ իմ, երկրի վրա ամենուրեք կընկալվեն: Որովհետև եթե դու տեսել ես մարդու միջին տարիքը, դու ունակ կլինես քո

նեփական միջավայրում, քո ծննդավայրի մաքուր երկնքում կանխատեսելու հետագա իրադարձությունները: Որովհետև միայն Ամենաբարձրյալ Աստծուն է հայտնի իր լույսի Հավերժությունը, որը բխում է հենց իրենից, և ես բացահայտ ասում եմ նրանց, ում աստվածային անսահման, անչափելի և անհասանելի մեծությունը կամեցել է բացահայտումներ տալ մի երկար ու մտախոհ ներշնչման միջոցով, որ, Աստծո կողմից ցույց տրված այս քողարկված իրողության օգնությամբ, կա երկու հիմնական երևույթ, որոնք ըմբռնվել են նրա բանականությամբ, ով մարգարեանում է. առաջինն առկա է նրա գիտակցության մեջ, ով, լուսավորվելով գերբնական լույսով, կանխագուշակում է աստղերի գիտությամբ, երկրորդը նրան թույլ է տալիս մարգարեություններ անել՝ բացահայտումով ներշնչելով, որը միայն մի մասն է աստվածային անսահմանության. որի միջոցով Մարգարեն կարող է դատողություններ անել շնորհիվ այն բանի, ինչ նրան տվել է աստվածային բանականությունը Արարիչ Աստծո օգնությամբ և մի բնական շնորհով: Այսինքն՝ այն, ինչ կանխագուշակվել է, ճշմարտացի է և իր ծնունդն առել է երկնքում: Եվ մի այդպիսի լույսն ու թույլ ցոլքը ավելի արդյունավետ են, քան մնացյալը, և մի այդպիսի վսեմությունը ավելի նվազ չէ, քան բնության լույսը, որովհետև բնության (մարդկային) լույսը փիլիսոփաներին այնքան վստահություն է ներշնչում, որ առաջին պատճառի (բնական) օրենքներով նրանք հասնում են ավելի բարձր ուսմունքների, ամենախոր անդունդների: Բայց, որդյակ իմ, որպեսզի ես քո ընկալման ապագա տարողության համար չափազանց հեռուն չտարվեմ, իմացիր, որ գրի մարդիկ այն եղանակով, որով ես հայտնաբերել եմ աշխարհը, հանդես կբերեն շատ մեծ և նմանը չունեցող պարծենկոտություն համաշխարհային ցնցումից առաջ, որը կբերի այնքան ոմբակոծումներ և այնպիսի ուժգին հեղաբեկումներ, որ համարյա չի լինի մի պետություն, որը զերծ կմնա հուզումներից, և սա կշարունակվի այնքան, մինչև որ ամեն ինչ կվերանա, բացի պատմությունից և տեղանքից: Ահա թե ինչու մի շարք երկրներում նման հեղաբեկումներից առաջ և հետո անձրևներն այնքան սակավ կլինեն և երկնքից կրակի և հրկիզող

արկերի մի այնպիսի մեծ առատություն կթափվի, որ ոչինչ չի խուսափի այրվելուց: Եվ սա տեղի կունենա վերջին ցնցումից (1999 թ.) առաջ: Որովհետև նախքան պատերազմի դարաշրջանի (20-րդ դար) ավարտը և նրա վերջին փուլի ընթացքում (1975—1999) պատերազմն այդ դարը կպահի իր իշխանության տակ: Մի մասը շատ տարիներ ներքաշված կլինեն հեղափոխության մեջ, իսկ մյուսներն ավելի երկար ժամանակ, ավելի շատ տարիներ կկրեն ավերածություններ: Իսկ այժմ ամենազոր և հավիտենական Աստծո օգնությամբ, մենք ղեկավարվում ենք Հանրապետության օրենքներով, մինչև, որ Հանրապետությունը կավարտի իր լրիվ շրջանը, միապետությունը հետ կգա, այնուհետև կգա ոսկե դարաշրջանը (Զրհոսի դարաշրջան, 1999 թվից հետո): Որովհետև համաձայն երկնքի նշանների՝ Ոսկե դարաշրջանը կվերադառնա հեղափոխական մի ժամանակաշրջանից հետո, որն ամեն ինչ շուռ կտա վերից վար՝ դեպի որը մոտենում է աշխարհը, և այժմվանից սկսած, երբ ես գրում եմ, կանցնի 177 տարի, երեք ամիս և 11 օր՝ իր ետևից բերելով գաղափարների ու բարքերի այլասերում, և մի երկարատև սով, առավել ևս ջրհեղեղներ հիմիկվա և վերևում նշված ժամկետի միջակայքում. դրանցից առաջ և հետո մարդությունը շատ անգամ այնքան սակավաթիվ կդառնա, և մարդիկ այնքան քիչ կլինեն, որ չի գտնվի որևէ մեկը, որ կցանկանար նվաճել տարածություններ, որոնք ազատ կմնան նույնքան երկար ժամանակ, որքան որ շահագործվել են: Եվ սա երկնային ակնհայտ դատաստանից հետո, նախքան այն, որ մենք կհասնեինք յոթերորդ հազարամյակին, որը կավարտի ամբողջը՝ մեզ մոտեցնելով ութերորդին, ուր և ութերորդ ոլորտի երկնակամարն է, որն ընդարձակ չափեր ունի, որում մեծ և հավերժական Աստված կավարտի հեղափոխությունը, և որում համաստեղությունները կվերականգնեն իրենց շարժումը, ինչպես և բարձրագույն շարժումը, որը երկրին կտա հաստատունություն և կայունություն, նրա ընթացքը չի շարունակվի դարերն ի վեր. քանզի բացառված է, որ իր կամքը չկատարվեր: Հակառակ երկիմաստ այն տեսակետների, որոնք Մուհամեդի զառանցանքներով գերազանցում են առողջ բանականությունը. ահա թե ինչու արարիչ Աստված

կրակի իր պատգամաբերների միջոցով, նրանց ցոլքի հետ և մեր ընկալմանը, ինչպես մեր աչքերին, առաջարկում է ապագայի կանխատեսման պատճառները, որոնք վկայում են գալիք նշանակալի իրադարձությունների մասին, որոնք պետք է երևան նրան, ով կանխագուշակում է: Որովհետև նախանշանը, որ ծագում է արտաքին լույսից, անխուսափելիորեն հանգում է նրան, մասամբ էլ՝ այդ արտաքին լույսի միջոցով արվող դատողությանը: Այնպես որ մտահղացումը որ թվում է՝ ունի բանական կարողություն, հիվանդ երևակայության արդյունք չէ: Բանականությունը պետք է առանձնանա և իր վրա ուշադրություն գրավի: Ամբողջը կանխագուշակվել է աստվածային շնչով և շնորհիվ հրեշտակային բանականության, որ ներշնչվել է մարգարեացող էակին՝ նրան տալով ճիրականությամբ օծված մարգարեություններ, որոնք նրան լուսավորում են՝ նրա ողջ երևակայությունը զբաղեցնելով գիշերային տարբեր հայտնություններով, առավել ևս՝ ցերեկային արժանահավատությամբ, և գուշակը մարգարեանում է աստղաբաշխության գիտությամբ, գալիքի շատ ճիրական կանխատեսման օգնությամբ՝ հաշվի ճստելով միայն ազատության մեջ թևածող իր արիության հետ: Այս ժամին, որդյակ իմ, ըմբռնիր այն, ինչ ես հայտնաբերել եմ իմ հաշվարկների միջոցով, որոնք համաձայնում են ի հայտ եկած ներշնչմանը, որովհետև այժմ մեզ է մոտենում մահվան սուրը՝ համաճարակով, երեք մարդու պատճառով տեղի ունենալիք սարսափելի պատերազմով, որի նմանը երբևէ կյանքում չի եղել, և քաղցով. ու այդ սուրը կհարվածի երկրին, և հաճախ հարվածը կկրկնվի, որովհետև աստղերը համաձայնում են այս հեղաբեկման հետ, այնպես, ինչպես ասել է Տերը. Ես նրանց կկոտորեմ երկաթե ձողով իրենց անօրենության համար և նրանց կպատժեմ իրենց կծու խոսքերն արտասանելիս. որովհետև Աստծո ողորմածությունը մի որոշ ժամանակ այլևս չի հոսի, մինչև որ իմ մարգարեությունների մեծ մասը կկատարվեն, և այդ իրականացումը կլինի համընդհանուր: Այդ ժամանակ, բազմաթիվ անգամներ, չարագույժ մրրիկի ընթացքում այսպիսով ես նրանց կպատժեմ, կասի Տերը, և ես նրանց կկոտորեմ ու քոլորովին չեմ խղճա. և հազարավոր ուրիշ իրադարձություններ

երևան կգան ջրհեղեղների և շարունակական անձրևների (կամ անկարգությունների և հեղափոխությունների) հետևանքով, ինչպես ես այդ ավելի ամբողջականորեն շարադրել եմ գրավոր կերպով իմ մյուս մարգարեություններում, որոնք կազմված են հիմնավորապես, բայց անկանոն ձևով՝ սահմանափակելով վայրերը, ժամանակները և ավելի վաղ նշված ժամկետը, որ մարդիկ ապագայում կտեսնեն՝ ծանոթանալով իրադարձություններին, որոնք անխուսափելիորեն տեղի կունենան, ինչպես ես այդ գրի եմ առել ուրիշների համար ավելի պարզ մի լեզվով, որովհետև չնայած այս քողարկված ձևին, այդ իրադարձությունները հասկանալի կդառնան. բայց երբ անգիտությունը ցրվի, այդ ժամանակ հարցն ավելի պարզ կդառնա: Որդյակ իմ, ընդունիր, ուրեմն, քո հայր Միշել Նոստրադամուսի այս ընծան: Ավարտելով խոսքս՝ ցանկանում եմ, որ դու ըմբռնես այստեղ յուրաքանչյուր քառյակում ներառնված ամեն մի մարգարեությունը: Աղաչում եմ անմահ Աստծուն, որ նա բարեհաճ գտնվի՝ քեզ տալու երկար կյանք, բարի ու բարգավաճ երջանկություն:

Սալոն, 1-ը մարտի 1555 թ.

ԲԱՍՏԻԼԻ ԳՐԱՎՈՒՄԸ. 1789 Թ. ՀՈՒԼԻՍԻ 14։ ՊԱՏԵՐԱԶՄԸ. 1792 Թ. ԱՊՐԻԼԻ 20։

II, 57

Պատերազմից առաջ մեծ պատը կխորտակվի, արքան մահապատժի կենթարկվի,
Իր մահը կլինի չափազանց հանկարծահաս ու ցավալի,
Նախքան նա կավարտեր իր իշխանությունը։
(Պահակների) մեծ մասը արյան մեջ կլողա. Սենայի մոտ հողը կեղծվի արյամբ։

Պատմական տեղեկանք.

«1791 Թ. ապրիլի 14-ին «Ժողովրդի բարեկամ»-ի մեջ Մարատը գրում է. «Երբ հանգամանքների շլված մի զուգադիպմամբ Բաստիլի վատ պաշտպանված պատերը խորտակվեցին, փարիզեցիները հայտնվեցին ամբոցի առաջ. միայն հետաքրքրասիրությունն էր նրանց այդտեղ բերել»։

«Դը Լոնայը՝ Բաստիլի պարետը, և ողջ կայազորը, բացառությամբ կուսակալ Պյուժեի, կոտորվեցին ամբոխի կողմից, ինչպես հաշմանդամներ Ֆերանդն ու Բեսարելը»։

«1791 Թ. հունիսից խոսում են պատերազմի մասին։ Արտասահմանում ևս ռազմատենչ ոգին զորանում է։ Հարկավոր է, որ գահ բարձրանա Միապետ Լեոպոլդի որդին՝ դյուրաբորբոք Ֆրանսուա 2-րդը, որի համար և պայթում է պատերազմը։ Ավինյոնը Պապին վերադաձնելու իր նախաձեռնությանը ի պատասխան՝ Արքան, այս անգամ համաձայնելով իր մինիստրների և Օրենսդրական մեծամասնության հետ, պատերազմ է հայտարարում (1792 Թ. ապրիլի 20)»։

«Լուի 16-րդի մահապատիժը առաջ է բերում միապետականների վրդովմունքն ու այլ երկրների արքաների սպառնալի դատապարտումը (չափազանց հանկարծակի և ցավալի մահ), որոնք խորհում են միավորվել ընդդեմ հանրապետական ու ռազմատենչ Ֆրանսիայի, որը պատերազմ հայտարարեց Անգլիային (1793 Թ. փետրվարի 1)»։

1792 Թ.՝ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԵՆՐԻ 2-ՐԴ ԱՐՔԱՅԻՆ։

«... Եվ սա (միապետությունը) կձգվի մինչև 1792 Թ., որ կհամարվի դարի վերածնունդ...»։

Պատմական տեղեկանք.

Նոստրադամուսը մատնանշել է 1792 թ. և ոչ թե 1789 թ.։ Հին վարչակարգի վախճանը իրականում թվագրվում է 1792 թ. սեպտեմբերի 21-ին, երբ սկսվում է Հանրապետության 1-ին տարին։

Նոստրադամուսը անակնկալ մի դիտողություն է անում, երբ ասում է, թե կկարծեն, թե տեղյակ են դարի վերածննդին։ Իրականում, կտրելով ժամանակն ու տարածությունը, նա դիտի, որ 1792 թ. միապետությունը, սկսած 496 թվին Ռեմսում Կլովիսի թագադրումից, տևած կլինի 13 դար, բայց նա դիտի նաև, որ 5 հանրապետություններից ոչ մեկը չի գոյատևի 1 դար.

— 1-ին Հանրապետություն՝ 1792 թ. սեպտեմբերի 21-ից մինչև 1799 թ. դեկտեմբերի 15։ 7 տարի 3 ամիս։

— 2-րդ Հանրապետություն՝ 1848 թ. փետրվարից մինչև 1851 թ. դեկտեմբերի 2։ 3 տարի 7 ամիս։

— 3-րդ Հանրապետություն՝ 1870 թ. սեպտեմբերի 4-ից մինչև 1940 թ. հունիսի 22։ 69 տարի 9 ամիս։

— 4-րդ Հանրապետություն՝ 1946 թ. դեկտեմբերից մինչև 1958 թ. սեպտեմբեր։ 11 տարի 11 ամիս։

— 5-րդ Հանրապետություն՝ 1958 թ. սեպտեմբերից մինչև... Շարունակելի։

Այստեղից էլ «դարերի վերածնունդ» արտահայտությունը։

I ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՅՈԹ ՏԱՐԻՆԵՐԸ. 21-Ը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1792 Թ. ՄԻՆՉԵՎ 15-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1799 Թ.։

VI, 63

Տիկինը (Հանրապետությունը) գալով իշխանության գլուխ,
Թագավորը առաջինն է մահանում մեծ պատիվներ
ունեցողների մեջ,
Յոթ տարի շարունակ կճաշակի ցավ ու տառապանք,
Բայց երջանկության մեջ ապրելու դրանից ավելի երկար
ժամանակ չի ունենա։

Պատմական տեղեկանք.

«Արտակարգ ժողովը (Կոնվենտը) հավաքվում է 1792 թվականի սեպտեմբերի 20-ին, այն լուծարում է թագավորությունը։ Մյուս օրը այն որոշում է ընդունում, որ պաշտոնական փաստաթղթերը այսուհետև թվագրվելու են Հանրապետության I տարվա հաշվարկով»։

«1792-ից մինչև 1799 թվականը Ֆրանսիան ապրում է խռովություն-

ների և սպանությունների մի այնպիսի ժամանակաշրջան, որպիսին նա երբեք չէր տեսել նույնիսկ հավատաքննության ամենախավար օրերին (Յոթ տարի շարունակ կճաշակի ցավ ու տառապանք)։

«Քեռներից մարդիկ, իրենց իրավունքների մեջ վերահաստատված և դահճական բուրժուաները երախտագիտություն են հայտնում Բոնապարտին, որը խաղաղեցնում է մարերի խռովքը։ Նա թույլատվություն է տալիս արտագաղթածներին վերադառնալ Ֆրանսիա և իր շուրջն է հավաքագրում մեծ թվով մարդկանց՝ նրանց տալով պաշտոններ վարչության կազմում։ Նա ներում է շնորհում շուաններին»։

«VIII տարվա (15-ը դեկտեմբերի 1799 թ.) սահմանադրությամբ՝ գործադիր ողջ իշխանությունը հանձնվում է երեք հյուպատոսների (կոնսուլների) ձեռքը, որոնք ընտրված էին տասը տարի ժամանակով, սակայն միայն I հյուպատոսը՝ Բոնապարտը, իրավունք ուներ որոշումներ կայացնելու, ավելին՝ Բոնապարտը նաև օրենսդրական նախաձեռնություն ուներ»։ I Հանրապետությունը, այսպիսով, 7 տարի և երկու ամսից փոքր-ինչ ավելի կյանք կունենա։ «Բայց երջանկության մեջ ապրելու դրանից ավելի երկար ժամանակ չի ունենա»։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ—1917 Թ.։ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆ 1917—1922 ԹԹ.։ ԽՍՀՄ-Ի ՀՌՉԱԿՈՒՄԸ—1922 Թ.։

Նախաձայն 62

Հեռվից եկած թշնամական բանակների ներխուժումներ, մարդիկ, որոնք նախապատրաստված չեն լինի ընդհարմանը

Մի տխուր ձեռնարկումի (հեղափոխության) պատճառով, որը օդը կդարձնի շնչելու համար անպիտան ու գարշահոտող։

Բոլոր կողմերից պետության ղեկավարները հարվածներ կստանան,

Եվ կհարձակվեն (ռուսները) 1917-ից մինչև 1922 թվականը (Նոստրադամուսի բնագրում՝ տասնյոթից մինչև քսաներկուսը)

Պատմական տեղեկանք։

«Բոլշևիկյան հեղափոխությունը սահմանեց ռուսական պատմության կատարելապես մի նոր ընթացքը՝ հեղաշրջելով քաղաքական, վարչական, տնտեսական և հասարակական կառուցվածքները... Նոր վարչակարգի իրական դիմքը ի հայտ եկավ միայն 1917 թ. հոկտեմբերին։ Ներքին պայքարի քսան տարիները ձևավորեցին Ռուսաստանի պատմության ողբերգական մի

ժամանակաշրջանը (տխուր ձեռնարկում), նախկին կայսրությունը 1922-ին դարձավ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն... Հոկտեմբերին հաջորդած առաջին իսկ օրերին նորաստեղծ կառավարությունը ստիպված էր կռիվ մղել ոչ միայն երկրի ներսում գլուխ բարձրացրած ընդդիմադիր ուժերի, այլ նաև օտարերկրյա ինտերվենցիայի դեմ. Ռուսաստանը պատերազմից դուրս եկավ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով (1918 թ. մարտի 3), ֆրանսիական, անգլիական, ամերիկյան և ճապոնական բանակները իրենց միջոցներով պաշտպան կանգնեցին Ռուսաստանում սանձազերծված քաղաքացիական պատերազմին՝ ընդհուպ մինչև 1920 թ. նոյեմբեր ամիսը, իսկ Հեռվում՝ Հեռավոր Արևելքում, այն ձգձգվեց մինչև 1921 թ. նոյեմբերը»։

«Ռուսական հեղափոխությունը սկսվեց առանց բռնությունների, բայց Լենինի դեմ կազմակերպված մահափորձը և քաղաքացիական պատերազմը ոչնչացրին Աստվածաշնչի ձեռքերը։ 1919-ից մինչև 1920 թվականն ընկած ժամանակամիջոցում հաշվեհարդարի, սովի, համաճարակների (գարշահոտող օդ) զոհերի թիվը կհասնի մինչև 7 միլիոնի։ Լենինի կարգադրությունն էր՝ մահ կամ հաղթանակ»։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ—1917 Թ.։ ՌՈՄԱՆՈՎՆԵՐԻ ՍՊԱՆԴԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ։

Նախանշան 89, հոկտեմբեր

Ահա և (հոկտեմբեր) ամիսը՝ սոսկալի այն դժբախտություններով, որ նա բերելու է։
Կարմիր դրոշ կրող բոլոր-բոլորը կգտնեն մահ, հիվանդություններ, սով և քաղաքացիական պատերազմ։
Ընդդիմադիրները կդատապարտվեն աքսորի,
Եվ հնարավոր չի լինի վերահսկելու մեծամեծների մահը, որը դաղտնի կմնա։

Պատմական տեղեկանք.

«1917 թ. հոկտեմբեր ամսին Ռուսաստանի ներքին իրադրությունը աղետալի է։ Թղթադրամի արժեզրկումը, պետական պարտքերի ծանրությունը անխուսափելի է դարձնում ֆինանսական լիակատար սնանկացումը»...

«Հոկտեմբերյան (25 հոկտեմբերի — 1 նոյեմբերի) զինված ապստամբությունը։ Մինչ Կերենսկին լքում է Պետրոգրադը՝ միանալու համար այն զորաբանակներին, որոնց կանչել էր ճակատային գծից, կարմիր պահակազորի նավաստիները, զինվորները, քանվորները գրավում են Ձմեռային պալատը, ցրում են Սահմանադիր ժողովը, ձերբակալում ժամանակավոր կառավարության անդամներին։ Պետրոգրադի վրա շարժվող բանակները,

որոնք այնքան էլ տրամադրված չէին կռվելու, տեսնում են իրենց առաջխաղացման կասեցումը, ինչպես երկու ամիս առաջ։ Նրանց ղեկավարները բանակցությունների մեջ են մտնում բոլշևիկների հետ։ Կերենսկուն հաջողվում է խուսափել ձերբակալությունից։ Այդ ընթացքում Պետրոգրադում, ապա և Մոսկվայում, ժամանակավոր կառավարությունը վերականգնելու կաղետների (սահմանադրական ժողովրդավարների) ջանքերը անհաջողության մատնվեցին։ Քաղաքական առումով բոլշևիկյան հեղափոխությունը հաղթանակեց նոյեմբերի 1-ին»։

«1918 թ. հուլիսին, քանի որ նրանք գտնվում էին կոմունիստների ձեռքում, Ռուսաստանի ցար Նիկոլայ Երկրորդը, նրա կինը՝ Ալեքսանդրան և նրանց հինգ զավակները (մեծամեծեր) անհետացան և այլևս երեք չերևացին։ Պաշտոնական հաղորդագրությամբ նրանք սպանվել էին հրացանապարկերով և սվիններով այն նույն տանը, ուր նրանք կալանված պահվում էին։ Սակայն այդ իրադարձությանը հետևած հիսունութ տարիների ընթացքում այդ խորհրդավոր արարքի շուրջը սկիզբ առած իրարամերժ ասեկոսեները միայն բազմապատկվում էին, ճշմարտությունը առավել ևս դիմակավորելով ու առասպելներ հյուսելով, դրանով իսկ բազմաբարդելով համընդհանուր շփոթմունքը... Այսպիսով սպանության տարբերակի խնդիրը լուրջ հարցականի տակ էր դրված, իսկ ինչ վերաբերում է Ռոմանովների ճակատագրի իրական եղելությանը՝ այս բնագավառում մեր հայտնագործություններն ու պրպտումները մեզ այնքան էլ առաջ չտարան (որը գաղտնի կմնա)»։

ՀԱՎԱՏԱՆՔՆԵՐ ԱՍԻԱՅԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ—1894—1923 ԹԹ.։

III, 60

Ասիայի ողջ տարածքում և հատկապես Մյուսիայում,
Լյուդիայում և Պամֆիլիայում* (Թուրքիա)
Մեծ բռնադրավում կլինի քրիստոնյաների ունեցվածքի,
Այստեղ, ազատագրական պայքարի քողի ներքո արյուն
կհեղվի
Ուխտադրժությամբ լեցուն մահմեդական մի երիտասարդ
Թուրք ղեկավարի (երիտ-Թուրքեր) կողմից։

---

* Ժամանակակից Թուրքիայի արևմտյան հատվածների հնագույն անվանումները։

Պատմական տեղեկանք.

1894—1923 թթ. Թուրքիայի ողջ տարածքում տեղի ունեցավ 20-րդ դարի առաջին մեծ ցեղասպանությունը հույն և հատկապես հայ ժողովուրդների նկատմամբ։ Բնակչության ողջ ունեցվածքը բռնագրավվեց, հայությունը տեղահան եղավ, կորցրեց իր պատմական հայրենիքի մեծագույն մասը։ Երիտթուրքական կառավարությունը իր սոնրագործությունը արդարացնելու համար փարիսեցիորեն հայտարարում էր, որ Թուրք ժողովուրդը աղտատարական պայքար էր մղում իր երկրի ամբողջականությանը սպառնացող այլադավան-անհավատների ոտնձգությունների դեմ։ Նոստրադամուսը այստեղ գործածած un noir ֆրանսերեն արտահայտությամբ բացահայտ նույնահունչությամբ տվել է երիտթուրքական ղեկավարներից մեկի՝ Էնվերի ծածկագրված անունը։

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ — 1908—1919 ԹԹ.։ ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼ—1920 Թ.։

II, 49

Առաջին միահեծան նախագահի (Քեմալ) իրավախորհրդատուները
Հաղթողների (Դաշնակիցների) կողմից կաքսորվեն Մալթա կղզին՝
Հռոդոս և Կոստանդնուպոլիս քաղաքները թողնելու պատճառով,
Այնուհետև այդ տարածքները դուրս կգան իրենց հետնորդների ձեռքից, որոնք փախուստի կմատնվեն։

Պատմական տեղեկանք.

«Իտալիան, որը տենչում էր իր ձեռքը դնել Տրիպոլիի վրա, 1911 թ. սեպտեմբերին պատերազմ է հայտարարում Օտտոմանյան կայսրությանը և զորքեր է իջեցնում Տրիպոլի, այն նույն ժամանակ, երբ իր նավատորմը գրավել էր Հռոդոսը և Տասներկու կղզիները։ Տրիպոլիի ճակատամարտը խիստ դաժան էր, բայց դրանք Բալկաններում տեղի ունենալիք պատերազմի նախերգանքներն էին միայն, որոնք Թուրքիային ստիպեցին զիջումների գնալ... 1912 թ. հոկտեմբերի 18-ին բալկանյան պետությունների կողմից պատերազմ հայտարարվեց Թուրքիային... Հունական նավատորմը գրավում է էգեյան ծովի կղզիները...»

«Բուլղարիայի անձնատուր լինելը (1918 թ. սեպտեմբերի 29-ին) իր հետևից բերեց նաև Թուրքիայի կապիտուլյացիան։ 1918 թ. հոկտեմբերի

30-ին զինադադարի պայմանագիր ստորագրվեց Մուդրոսի խարսխակայանում, որի կարևորագույն հետևանքները եղան Դեմրուացիների գրաստագրումը և Կոստանդնուպոլսի առումը»։

«1919 թ. սեպտեմբերի 4-ին Սվազում (Սեբաստիա,— ծ. թ.) տեղի ունեցավ Ազգային ժողովի Հավաքը։ Մուստաֆա Քեմալը ընտրվեց ժողովի նախագահ (Առաջին նախագահը), որը միանդամայն թշնամական դիրք գրավեց մեծ տերությունների և Ստամբուլում նստած կառավարության նկատմամբ։ 1920 թ. մարտի 16-ին անգլիացիները դաշնակից զորաբանակների միաբյալ ուժերով գրավեցին ռազմական և ծովային մինիստրությունները, ոստիկանության ու փոստային ծառայությունները, այն նույն ժամանակ, երբ Մուստաֆա Քեմալին հավատարիմ պատգամավորներն ու խորհրդականները ձերբակալվել և աքսորվել էին Մալթա...»

«1922 թ. նոյեմբերի 21-ին բացված Լոզանի կոնֆերանսը ավարտվում է 1923 թ. հուլիսի 24-ին կնքված խաղաղության պայմանագրով։ Դա, փաստորեն, հաղթանակ էր Թուրքերի համար, քանի որ Թրակիայում նրա սահմանները անցնելու էին Մարիցա գետի հոսանքով, ինչպես նաև Թուրքիային էին վերադարձվում Իմբրոս և Տենեդոս կղզիները... Դաշնակիցները պարտավորվում էին լքել Ստամբուլը խաղաղության վավերացումից վեց շաբաթ անց»։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ — 1920 Թ.։ ՕՏՏՈՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆՈՒՄ Է ԵԳԻՊՏՈՍԸ։ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱՀԱՏՈՒՄԸ։

I, 40

Մի կեղծ հեղափոխություն՝ թաքնվելով խենթության ետևում,

Թուրքիայում (Բյուզանդիայում) փոխել կտա օրենքները,

Եգիպտոսը դուրս կգա (կայսրության կազմից), որը կանդամահատվի։

Հրովարտակով ու որոշումներով կփոխվեն դրամը և արժույթների հարաբերակցությունը (ոսկու գնահաշվարկով)։

Պատմական տեղեկանք.

«Բեռլինի վեհաժողովը (1878 թ. հունիսի 13) մի նոր և կարևոր փուլ է նշանավորում Օսմանյան կայսրության անդամահատման գործում. եթե Արևելքում այն հետագայում կորցնելու էր միայն Եգիպտոսը, որի վրա Անգլիան գնալով ավելի ու ավելի էր հաստատում իր տիրապետությունը, ապա Եվրոպայում, ըստ էության, նա կպահպանի միայն շատ փոքր ծավալի տարածքներ, աղքատիկ փշրանքները այն լայնատարած ամբողջի,

որից տեղական նացիոնալիստները, մեծ տերությունների օժանդակությամբ, կամաց-կամաց իրենց պատառն են թոցնում»։

«Մուստաֆա Քեմալի հեղափոխությունը. ստեղծելով մի միացյալ կուսակցություն, սանձահարելով ընդդիմադիր ուժերին, Մուստաֆա Քեմալին հաջողվեց թուրք ժողովրդին վերստին ներշնչել վստահություն սեփական ուժերի նկատմամբ (կեղծ հեղափոխություն)»։

«Ներքին քաղաքականության բնագավառում նշանակալից փաստեր են բազմակուսության վերացումը, կրոնական կարգերի վերացումը, ֆես կրելու արգելումը (1925 թ. օգոստոս-նոյեմբեր), նոր քաղաքացիական օրենսդրության հիմնումը (նոր օրենքներ)՝ քրեական և առևտրական, կազմված ըստ շվեյցարական, իտալական և գերմանական օրենսդրական նորմերի... ապահովագրական մաքսային սակացուցակների կիրարկումը... 1931 թ. վերջնականապես կազմակերպվում է Հանրապետության կենտրոնական Բանկը. այն փոխարինելու է գալիս օտտոմանյան բանկին, որպես պետական բանկ և հիմնադրում է սեփական դրամի թողարկումը»։

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(1995 թ. մարտ-ապրիլ — 1998 թ. նոյեմբեր)

ՄԻՆՉՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԵՑՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ — 1967 Թ. ՀՈՒՆԻՍԻ 5—10։ ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ ԳԱԶԱՅԻ, ՀՈՐԴԱՆԱՆԻ ԵՎ ԳՈԼԱՆԻ ԲՌՆԱԶԱՎԹՈՒՄԸ։

III, 97

Մի նոր օրենքով նորանոր տարածքներ կբռնագավթվեն Սիրիայի, Հուդայի (երկրի) և Պաղեստինի հողերից։

Բարբարոսական մեծ տերությունը (Արաբական տերությունը) կկործանվի՝

Նախքան Ֆեբուսը (արև) կբոլորի իր շրջանը (նախքան ամառային արևադարձը՝ հունիսի 21-ը)։

Պատմական տեղեկանք.

«Իսրայելա-արաբական պատերազմը (1967 թ. հունիսի 5-ից 10-ը). Եգիպտոսի, Հորդանանի և Սիրիայի դեմ ձեռնարկած մի կայծակնային պա-

տերադրմի հետևանքով իսրայելական բանակները բռնազավթում են Սինայի[1] ամբողջ թերակղզին՝ մինչև Սուեզի ջրանցքը, Հուդան[2] և Գոլանի բարձրությունները[3]...

Ամսի 5-ի առավոտյան իսրայելական ռազմաօդային նավատորմը հարձակվում է եգիպտական օդանավակայանների վրա և հենց գետնի վրա ոչնչացնում թշնամու ավիացիայի մեծագույն մասը, եգիպտական բանակը ջախջախվում է (կկործանվի) պատերազմական գործողությունների հենց առաջին իսկ ժամերին։ Տիրելով Գազային և էլ-Արիշին՝ իսրայելցիները խորանում են դեպի Սինայի անապատը և, ամսի 7-ից սկսած, բռնազավթում են Շարմ-էլ-Շեյխ նավահանգիստը և հասնում Սուեզի ջրանցքին։ Հորդանանցիների կողմից նրանք ավելի մեծ դիմադրության են հանդիպում։ Այդ ընթացքում արդեն գրավված են հին քաղաք Երուսաղեմը և Հորդանանի ողջ այսրհորդանանյան հատվածը (Հուդա)։ Արաբական աշխարհը ընկճված ու հուսահատված է իսրայելցիների հաջողությունների թափից, ծավալից ու կտրուկությունից... ԽՍՀՄ-ը Իսրայելին մեղադրում է ագրեսիայի համար և, նրա պահանջով, ՄԱԿ-ի Գերագույն խորհուրդը հավաքվում է ամսի 19-ին (նախքան ամառային արևադարձը)։ Համար առաջին խնդիրը այժմ Իսրայելի գրաված արաբական տարածքներն են։ Հունիսի 11-ից սկսած՝ գեներալ Դայանը հայտարարում է, որ Իսրայելի առաջնահերթ խնդիրն է ամեն գնով պահպանել Գազան, Շարմ-էլ-Շեյխը, հինավուրց քաղաք Երուսաղեմը և Այսրհորդանանը (Հուդան)։ Իսրայելցիները կպնդեն, որ խոսք անգամ չի կարող լինել մինչև 1967 թ. հունիսի 5-ի սահմաններին վերադառնալու մասին, բանի որ խնդիրը սահմաններին չէր վերաբերում, այլ ըստ 1949 թ. զինադադարի պայմանավորվածությունների գծված և անցկացված սահմանազատման (դեմարկացիոն) գծին, որը արաբական երկրների կողմից երբեք չի ճանաչվել իրավաբանորեն (նոր օրենքով)... Հունիսի 27-ին լա Կնեսսետը հավանություն է տալիս և իր պաշտանության տակ է առնում սուրբ վայրերի պահպանության մասին ընդունված «հիմնարար օրենքը»։ Կառավարությունը վճիռ է կայացնում արաբներից ետ գրավել հինավուրց քաղաք Երուսաղեմը»։

---

[1] Որտեղ գտնվում է նաև Գազան. մերձավորարևելյան քաղաք հարավային Պաղեստինում։

[2] Հուդա. Մեռյալ ծովի և Միջերկրականի միջև տեղադրված Պաղեստինի հարավային հատվածը, որի մեծագույն մասը այսօր կազմում է Այսրհորդանան կոչվող հարավային այն տարածքը, որ Իսրայելը գրավել է Հորդանանից 1967 թ. վեցօրյա պատերազմի ընթացքում։

[3] Սիրիական տարածք։

ՀՐԵԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՊԱՂԵՍՏԻՆ — 1948 Թ.։ ԳՈԼԴԱ ՄԵՅՐԸ ԵՎ ՍԻՈՆԻԶՄԸ։ ԳՈԼԴԱ ՄԵՅՐԻ ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆԸ — 1974 Թ.։

VIII, 96

Ստերջ, անպտուղ Սինագոգը[1] (սիոնիզմը)[2]
Ընդունելություն կգտնի անհավատների (արաբների) շրջանում.
Գալով Բաբելոնից (Նյու-Յորքից)[3]՝ հետևորդների կինղեկավարը[4] (Գոլդա Մեյրը)
Կկորցնի իր իշխանությունը դժբախտության ու դառնության բերումով։

Պատմական տեղեկանք.

«Գոլդա Մեյր՝ ծնված Կիևում (Ուկրաինա), 1906 թվականին իր ընտանիքի հետ արտագաղթել է Միացյալ Նահանգներ։ Նա իրեն ճանաչել տվեց որպես Սիոնիստական տեղական աշխատանքային կազմակերպության պատասխանատու աշխատակից... 1924 թվականից նա անդամագրվում է «Հիստադրութ»-ին և 1928-ին դառնում է այդ կազմակերպության կանացիական բաժանմունքի քարտուղարը... Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նա ակտիվ կերպով աշխատում է Դավիդ Բեն Գուրիոնի կողքին՝ ապահովելու նպատակով հրեաների վերադարձը Սիոն 1946 թվականին, այն ժամանակ, երբ Մոշե Շարեթը՝ Հրեական Գործակալության քաղաքական վարչության ղեկավարը և այլ ակտիվիստներ ձերբակալված էին

---

[1] Սինագոգը թվում է, որ պետք է ծնված լինի Բաբելոն աքսորված հրեաների շրջանում, դրդված այն պահանջից, որ նրանք զգում էին, Տաճարից հեռու գտնվելով, աղոթելու և համատեղ կազմակերպվելու նպատակով։ Աքսորից վերադառնալուց հետո՝ առաջին սինագոգը կառուցվեց Երուսաղեմում, Տաճարի Առմուտքին մոտ։

[2] Քաղաքական-կրոնական շարժում, հիմնադրված Թեոդոր Հերցլի կողմից 19-րդ դարավերջին, որ նպատակ էր հետապնդում Պաղեստինում ստեղծել մի պետություն, ուր կարող են ի մի հավաքվել աշխարհով մեկ ցրված հրեաները։

[3] Մեծ Բաբելոնը, ժամանակակից Բաբելոնը. սովորաբար նշանակում են մեծ կենտրոններ, ինչպես Լոնդոնը, Փարիզը և այլն։

[4] Բանաստեղծները հաճախ կանացի անուններ են տալիս կենդանի կամ անկենդան էակներին, պատմական մի որոշակիությամբ ցույց տալով տեղը, ծագումը, նախասիրած սովորությունները. այդպես է, որ նրանք Իսրայելի կանանց կոչում են Սիոնի որդիներ։

բրիտանացիների կողմից՝ նա (հետևորդների կին-ղեկավարը) փոխարինում է Ճարեթին՝ սկզբում ժամանակավորապես, և պայքարում էր ակտիվիստ գործընկերներին, հրեա քաղբանտարկյալներին ազատելու համար... Մի փոքր ավելի առաջ, մինչ Բեն Գուրիոնը կհռչակեր Իսրայելի պետության ստեղծումը, նա ուղևորվում է ՄԱԿ՝ ձեակերպելու համար մի վերջին պաշտպանական ճառ՝ հօգուտ Պաղեստինի Հրեական պետության միջազգային ճանաչման... 1973 թ. հոկտեմբերին սանձազերծված մի կործանարար պատերազմում Իսրայելը պիտի դիմակայեր եգիպտական ու սիրիական զինված ուժերին, որին աջակցում էին տարբեր քանակակազմ ունեցող արաբական զինված զորամիավորումներ։ Այդ ժամանակ Գոլդա Մեյրի կառավարությունը ենթարկվում էր հրեական աջերի ճարձակումներին և քննադատվում բարձր հրամանատարական կազմի կողմից՝ երկրի աննախապատրաստվածության վիճակի պատճառով։ Դեկտեմբերի 31-ին նշանակված ընտրությունները Գոլդա Մեյրին և նրա կուսակցությանը ամեն դեպքում պետք է իշխանության գլուխ բերեին։ 1974 թ. մարտին ճնշադատությունները տիկին Մեյրի և գեներալ Դայանի հասցեին դարձան ավելի խիստ և հաճախակի, Իսրայելի վարչապետը ստիպված էր մեկ ամիս հետո իր կառավարությամբ հանդերձ հրաժարական տալ (դժբախտություն և դառնություն)»։

Նոստրադամուսն այստեղ զուգահեռ է անցկացնում Բաբելոնյան գերությունից հրեաների առաջին վերադարձի և երկրորդի՝ ժամանակակից Բաբելոններից (Լոնդոն, Փարիզ, Նյու-Յորք) նրանց ներգաղթի միջև։

ՔԻՓՓՈՒՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ — 1973 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ։ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԻՍՐԱՅԵԼԻ ՎՐԱ։

Վեցյակ 31

Ժողովուրդը, որն իր մեջ հաղթահարել է ցավ ու տառապանքների զգացումը,
Որը երբեք չի վախեցել երկաթից, կրակից, ջրից (պատերազմից ու հեղափոխությունից),
Երկրում, որը շատ մոտ էր քրիստոնեության սկզբնավորման վայրին,
Կզարմանա պատերազմական մի գործողությունից՝
Անակնկալ կերպով սկսած Կոկորդիլոսի[1] (Եգիպտոսի) կողմից,
Որի բնակչությունը կհրճվի մի այդպիսի թատերական ներկայացման առիթով։

---

[1] Հին ժամանակներում ամենահայտնի տեսակը Նեղոսի կոկորդիլոսն է։ Հին եգիպտացիները պաշտում էին նրան։

Պատմական տեղեկանք.

«6-ը հոկտեմբերի 1973 թ.։ ժամը 13-անց 50 րոպե։ Նախարարների խորհուրդը դադարեցված է Գոլդա Մեյրի, Դայանի և էլեազարի կողմից առավոտյան կողմ ընդունած որոշումների փաթեթի և ձեռք առնված միջոցառումների ծրագրի վավերացման գործերով։ Հանկարծ բացվում է խորհրդի դահլիճի դուռը։ Ներս մտնողը գեներալ Իսրաել Լիորն է. Թշնամին հենց նոր հարձակում է սկսել... Անակնկալը միանգամայն կատարյալ էր. հարավից՝ եգիպտացիների և հյուսիսից՝ սիրիացիների միաժամանակյա հարձակումը... Եգիպտական հինգ զորամիավորումներ, զինված և մարզված խորհրդային Միության կողմից, ջրասույզ են անում Բար-Լևի գծի պաշտպանական ամրությունները և, բալիստիկ հրթիռների օդային աջակցությամբ, հինգից-տաս կիլոմետր առաջանում են Սինայի լայնություններում։ Իսրայելի զրահապատ մեքենաները ջախջախվում են հեռվից ղեկավարվող 3 կմ հեռահարության հակատանկային հրթիռների միջոցով, որոնցից աֆձակվող անընդհատ կրակահերթերը՝ եգիպտացիների կողմից ձեռք առնված, անմիջապես էլ հարցականի տակ են դնում ողջ ժամանակակից մարտարվեստը. զրահապատ մեքենաների գերազանցությունը հրետանու նկատմամբ... Հաջար երկու ճարյուր եգիպտական ճրասայլեր ճարձակման են անցնում...»

«Ինչպես խոսում է Եգիպտոսից, նա նկատում է. Եթե մենք քաջ պատերազմողներ չլինք, դա նրանից է, որ մենք երբեք չենք սիրել կռվել։ Այս անգամ ուրիշ է։ Մենք վրեժ լուծելու վիրավորվածություն ունենք»։

ՔԻՓՓՈՒՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ — 1973 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6։ ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ։

Վեցյակ 35

Տիկինը (Գոլդա Մեյրը) մեծապես կվշտանա մահով (իսրայելացի զինվորների),
(Եբրայրական պետության) մայրը և խնամակալը կթողնի իշխանությունը՝ թափված արյան պատճառով,
Իր նախարարների հետ միասին՝ տիկինը պատասխանատվություն կկրի կոկորդիլոսների (եգիպտացիների)
Որբ երեխաների համար՝ իժ ու քարքերի[1] պատճառով որբացած,

---

[1] Իժը Կլեոպատրայի օձն է։ Կլեոպատրային հիշեցնող այս հանգամանքը ևս մատնանշում է եգիպտացիներին, ինչպես և կոկորդիլոսները։

Որոնք անակնկալ կհարձակվեն (Բար-Լևի գծի) ամրությունների, քաղաքների ու գյուղերի վրա։
Բայց ամենազոր Աստվածը նրանց կպաշտպանի դժբախտությունից։

Պատմական տեղեկանք.

«Հոկտեմբեր ամսվա 6-ին Քիփփուրի խնդրով ողջ Իսրայելը հավաքված է սինագոգներում՝ մեղսաքավության նպատակով... Կեսօրին հնչում են աղջանշանային կոչնակները։ Իսրայելը հարձակման էր ենթարկվել հյուսիսից և հարավից միաժամանակ. Սիրիայի և Եգիպտոսի կողմից... Հոկտեմբերի 6-ի առաջին ժամերի ընթացքում Գոլանի ճակատային գծերը հիմնահատակ ոչնչացվեցին, սիրիական հրասայլերը արդեն ուր որ է հասնում էին Գալիլիային, այն ժամանակ երբ, ջրանցքի վրա, 3.000 զինվորներ պետք է մի կերպ պաշտպանվեին իրենց դիմաց կանգնած տասնյակ հազարավոր եգիպտացիների (իժերի և կոկորդիլոսների) գրոհից։ Այլևս հեռու իրար շնորհավորելուց երկրի ներքին վերականգնման հաջողությունների կապակցությամբ՝ հրեաները իրար հարցնում էին. «Ինչպե՞ս կարող էին Քիփփուրի այդ անփութ սխալը թույլ տալ, ինչպե՞ս դա կարող էր հնարավոր դառնալ»։ Ոմանք էլ ավելացնում էին՝ սև հումորի եղանակով. «Դեռ պետք է ուրախ լինենք, որ արաբները մեզ վրա հարձակվեցին այն օրը, երբ մենք ապաշխարանք էինք կատարում։ Աստված չէր կարող մերժել մեզ՝ մեր հուշտ-տեսիլքին արժանանալու համար» (Ամենազոր Աստվածը նրանց կպաշտպանի դժբախտությունից)... Կառավարությունը արհամարհանքով մի կողմ կնետի Պենտագոնի զաղտնի ծառայությունների կողմից շարունակ կրկնվող վստահությունի խոստումները։ Ռազմական շտաբը քուն էր մտած Բար-Լևի պաշտպան գծի թիկունքում, ինչպես ֆրանսիացիները 1939-ին՝ Մաժինոյի գծի ետևում (ամրություններ)... Երուսաղեմում ու Թել-Ավիվում ողբում են (մեծապես կիշտանա) 2.000 մահացածների համար, որ բավականաչափ մեծ թիվ է երեք միլիոնանոց բնակչությամբ մի երկրի համար, հիվանդանոցներում իրար գլխի կուտակված ավելի քան 3.000 զինվորներ կան, 150.000 պահեստային զինվորներ են ուղարկվում ռազմաճակատները՝ զինված հակողություն իրականացնելու նպատակով, դա մի իսկական ողբերգություն է... 1974 թ. ապրիլի 10-ին, հրեական վեցթևանի աստղի մեջտեղում կանգնած, տանջահար եղած ու ուժասպառ, Տիկին Մեյրը հրաժարական է տալիս (կառավարելու իշխանությունը) պետության պրեզիդենտի իր պաշտոնից»։

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ, ՍՈՎ ԻՐԱՆՈՒՄ՝ 1979 Թ.։ ՇԱՀԻ ԳԱՀԸՆԿԵՑ ԼԻՆԵԼԸ — 1978-1979 ԹԹ.։ ԱՅԱԹՈԼԼԱՀ ՀՈՄԵՅՆԻՆ ՆՈՖԼԸ-ԼԸ-ՇԱՏՈՅՈՒՄ։

I, 70

Անձրև (հեղափոխություն), սով, պատերազմ չեն դադարի Պարսկաստանում,
Մեծ հավատքը (կրոնական մոլեռանդությունը) կդավաճանի Միապետին (Շահին),
Որի վախճանը կսկսվի Ֆրանսիայում՝
Մի մարգարեի պատճառով, որը քշված կլինի մի հետ ընկած տեղ (Նոֆլը-լը-Շատո)։

Պատմական տեղեկանք.

«Մոլեռանդ ցուցարարներով, որոնք կծածանեն իրենց հավատքի դրոշը, նրա համար կովելուն պատրաստ, մերկացված կրծքերով, շահին հավատարիմ զինվորների ձեռքերը կապած՝ այս ամբողջ վերջին շաբաթվա ընթացքում Իրանը բոլորի առաջ ի ցույց դրեց մուսուլմանական զարմանալի արթնացման ամենալավ կերպով թատերականացված օրինակը... Մեշհեդ և Քոմը Իրանում, Ալ Նաջաֆը և Քարբալան Իրաքում. սրանք շիիտ մուսուլմանների սրբությունն են։ Այժմ սրանց ավելանում է ևս մեկը, այս անգամ, սակայն, առանց մզկիթների ու ոսկեկուռ մինարեների, ոչ անգամ թուրքական գմբեթներով, մի երրորդ սուրբ քաղաք՝ ամբողջովին ապշահար եղած այն ամենի պատճառով, որ իրեն բաժին էր ընկել. Նոֆլը-լը-Շատոն։ Ղուրանի ընթերցման համար այնտեղ կար միայն արվարձանային մի ետ ընկած տաղավար։ Բայց հենց այնտեղ էլ ծունկի իջավ երկրպագելու կամ ընդամենը խոնարհվեց այաթոլլահ[1] Հոմեյնին...»։

«Այդ տարի, մոհարրանի նախօրեին Այաթոլլահ Հոմեյնիի արձակած կոչը, որով հրավիրվում էր հավատացյալներին նետվելու մի յուրատեսակ սրբազան ապստամբության հորձանուտը, ավարտվեց նրանով, որ կրքերի լարումը հասավ իր գագաթնակետին։ Մի՛ք տատանվի թափելու ձեր արյունը՝ պաշտպանելու համար իսլամը և թոթափելու բռնապետությունը, կոչ էր անում Նոֆլը-լը-Շատոյի իր առանձնության մեջ նստած շիիտների վտարանդի մարգարեն»։

«Իրանը ոտք է կոխում եղբայրասպան մի պատերազմի ասպարեզը, մարգարեանում է հեղափոխական գեներալ Մ. Հադավին։ Իրանի արաբների կրոնական առաջնորդ այաթոլլահ Խաֆանին կմարգարեանա դառն ողբերգությունների մասին... Գեներալ Ռահիմին վրդովվում էր. ամոթալի է տես-

---

[1] Նշանակում է՝ «Աստվածային նշան»։

նել իրանական գավառները կրակի ու արյան մատնված, երբ բանակը հանգըստանում է իր զորանոցներում...»։

ԻՐԱՆԻ ՇԱՀԻ ԳԱՀԸՆԿԵՑ ԱՆԵԼԸ — 16-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 1979 Թ.։ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ — 6-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 1978 Թ.։ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՒՄԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ — 3-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 1979 Թ.։

X, 21

Իր արհամարհանքի ու ատելության պատճառով՝ Շահը, անպատրաստ դիմադրելու,
Կպարտվի, երբ նա կփորձի ի ցույց դնել իր բանակը,
Հայրը՝ ցանկանալով ցուցադրել իր որդու ազնվածնությունը։
Հետո Պարսկաստանում կկատարվի այն, ինչ առաջներում անում էին մոգերը (հոգևորականները) (իշխանության գրավումը)։

Պատմական տեղեկանք.

(1978 թ. նոյեմբերի 6. երկուշաբթի, գեներալ Ազհարին, ցամաքային զորքերի գլխավոր հրամանատարը, նշանակվում է կառավարության ղեկավար։ Ջինվորականության բռնի գործողությունները արմատապես փոխում են խնդրի դրվածքը։ Դեռ երեկ՝ գտնվելով բեմի ետևում և միջամտելով միայն դժգոհության ալիքը զսպելու խնդրում, բանակը այսուհետև գրավում է բեմահարթակի առաջամասը»։

«1967 թվականին, այն ժամանակ, երբ նա պատրաստվում էր թագադրվելու որպես թագավոր և Ֆարահին էլ որպես թագուհի կարգել, Մոհամմեդ Ռեզան հայտարարում էր. «Ես ուզում եմ թողնել իմ որդուն մի երիտասարդ, զարգացած ու հպարտ մի ազգ, ամբողջապես ժամանակակից, կատարելապես հաստատակամ և ավելի ու ավելի շրջված դեպի ապագան և համագործակցությունը ողջ աշխարհի ժողովուրդների հետ...»։ Նրա հայրն էլ իր հերթին իրեն էր վստահել ժառանգորդության ջանադիր նվիրումի այս վերջին տարիները, որոնք նա լավագույնս ի կատար էր ածել։ Արդեն 1971 թվականին, Պերսեպոլիսի հանդիսավոր տոնակատարությունների ժամանակ, Շահը իմացնել էր տվել, որ ինքը մի օր իշխանությունը թողնելու է իր որդուն»։

«—Երեքշաբթի, 16-ը հունվարի, 1979 թ., Շահի մեկնումը Եգիպտոս։

— Կիրակի, 21-ը հունվարի, 1979 թ., Պարոն Թեհրանիի՝ Գահի խնամակալության խորհրդի նախագահի պաշտոնաթողությունը։

— Հինգշաբթի, 1-ը փետրվարի, 1979 թ., այաթոլլահ Հոմեյնիի վերադարձը Թեհրան։

— Շաբաթ, 3-ը փետրվարի, 1979 թ., այաթոլլահ Հոմեյնին հայտարարում է «Իսլամական Ազգային Խորհրդի» ստեղծման մասին»։

«Իրան. 200.000 մոլլաներ՝ պատերազմի պատրաստ»։

ԱՅԱԹՈԼԼԱՀ ՀՈՄԵՅՆԻՆ ԻՐԱՔՈՒՄ — 1963—1978 ԹԹ.։ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ — 1979 Թ.։

VIII, 70

Զարհուրելի, չար ու ստոր անձը
Կմտնի Միջագետք (Իրաք)՝ հաստատելու համար իր բռնատիրությունը.
Նրանք բոլորը բարեկամ կլինեն մի կեղծ Տիկնոջ (Իսլամական հանրապետության),
Հողը կզարհուրի այդ զարշելի սև կերպարանքի (արտաքինի) պատճառով։

Պատմական տեղեկանք.

«Մոլլաները հավատացյալներին կոչ են անում ապստամբելու անաստված բռնատիրության դեմ։ Շահը անձնապես և ուղղակիորեն նշանառության տակ էր։ «Շա՛հ, մենք քեզ կսպանենք», բղավում էին շքախմբերով քայլարշավող մոլեռանդ ամբոխները այն բանից հետո, երբ մզկիթներում հավաքված ունկնդրում էին բողոքականներին։ Նույնիսկ 1963 թվականին, այն ժամանակ Իրաք աքսորված Այաթոլլահ Ռուալլահ Մուսսավի Հոմեյնիի կողմից հրահրված և Իրանում սկիզբ առած խռովության առաջին ամենամեծ փոթորկման ժամանակ ապստամբությունը դեռևս չէր հասել նման ծավալների»։

«Իսլամական Հանրապետությունը, այնպիսին, ինչպիսին որ այն պատկերանում էր այաթոլլահ Հոմեյնիին, ցուցադրեց Իրանը կառավարելու իր ողջ անընդունակությունը։ Երկրում ընդհանուր առմամբ ժողովրդականություն չվայելող այդ կառավարությունը պահվում էր լոկ բնակչության ամենահետամնաց խավերի մոլեռանդության (բռնատիրություն) վրա հենվելով, հատարակական մի դաս, որն ամբողջովին ենթարկեցված էր «ախոնդների»՝ հոգևորականության ներկայացուցիչների իշխանությանը»։

ՌՈՒՍՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԱՖՂԱՆՍՏԱՆ։ ԱՖՂԱՆԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՎԱԽՃԱՆԸ։

X, 31

Սուրբ Կայսրությունը (ռուսների)[1] Աֆղանստան կմտնի,
Իսմայելի որդիները (մահմեդականները) այդ վայրերը
անպաշտպան կգտնեն,
Աֆղանները[2] կցանկանան պաշտպանել Աֆղանստանը,
Սակայն դիմադրողներին հողին կհավասարեցնեն
(կթաղեն)։

ԻՐԱՔՆ ԸՆԴԴԵՄ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ։

VII, 22

Միջագետքի քաղաքացիները (իրաքցիները)
Կգան Տարրագոնի[3] (Իսպանիայի) դաշնակիցների դեմ,
Մինչդեռ մարդիկ կզվարճանան, կծիծաղեն, խնջույքներ
կանեն, ողջ ժողովուրդը նիրհի մեջ կլինի։
Հոգևոր առաջնորդը կփախչի Ռոնի ափերը, մայրաքաղաքը
կզավթվի և ողջ տարածքը։

---

[1] Ռուսական կայսրությունը հայտնի է նաև «Սուրբ Ռուսիա» անունով։

[2] Այստեղ Նոստրադամուսը Աֆղանստանի՝ Կարմանիայի (պարսկական հնագույն պետության գավառներից մեկը, որը համապատասխանում է այսօրվա Աֆղանստանի տարածքին) բնակիչների համար օգտագործում է «Ավանակներ» ցեղանունը։ Վերջիններս, ըստ Ստրաբոնի, Կարմանիայում բնակվող ցեղեր էին, որոնք պատերազմում էին ավանակների վրա նստած։ Սրանով Նոստրադամուսը ներկայացնում է ռուսների հարձակմանը աֆղանների կողմից ցույց տված համառ դիմադրությունը։

[3] Քաղաք Իսպանիայում (Կատալոնիայում), որը տվյալ դեպքում ներկայացնում է Ատլանտյան դաշնակցության երկրները։

ԻՐԱՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ։ ՀԱՐՁԱԿՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՎՐԱ ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ։

III, 90

Մեծ, անպատկառ անձնավորությունը Տիգրիսի և Իրանի կողմերից[1],
Պատերազմ կվարի Ատլանտյան դաշնակցության մեծ անձնավորությունների հետ։
Այնուհետև Կարմանիայից (Աֆղանստանից) դուրս կգա մի զորահրամանատար,
Որպեսզի ափ իջնի Տիրենյան ծովում[2] և Մարսելում։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ — ԽՍՀՄ—ԱՄՆ։

VIII, 2

Խաղաղության խոսք կգնա ամենահզոր պետությունների (ԱՄՆ, ԽՍՀՄ)
Միապետների ու բռնապետների (ղեկավարների) միջև.
Բայց խաղաղության շուրջ համաձայնություն չի կայանա,
Քանզի պետությունների ղեկավարները մնացած մարդկանցից ավելի իմաստուն չեն լինի։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՈՒՄԸ։ ՄԻՆՉԵՎ ԲԱՐՍԵԼՈՆ ՁԳՎՈՂ ՊԱՏԵՐԱԶՄԸ։

VI, 64

Խաղաղության համաձայնագրերի ոչ մի կետ կողմերը հաշվի չեն առնի,

---

[1] Տիգրիսի (Իրաքի) և Իրանի համատեղ հիշատակությունը Սադամ Հուսեյնի պարագայում պատահական չէ, քանի որ, ինչպես հայտնի է, վերջինս պարսկական ծագում ուներ։

[2] Նեապոլը՝ ՆԱՏՕ-ի կարևորագույն ռազմաստրատեգիական բազան, որ տարածված է Տիրենյան ծովի ափին։

Պետական այրերը խաբեության մեջ վայրէջք կկատարեն.
Ցամաքում և ծովում խաղաղություն հաստատելու հայտարարություններ կարվեն։
Բանակը ակտիվ գործողություններ կծավալի մինչև Բարսելոն։

ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ։ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ։

I, 91

Առասպելները մարդկանց մոլորության մեջ կգցեն,
Քանզի հենց իրենք կլինեն պատճառը մեծամեծ պատերազմների,
Որոնցից առաջ մարդիկ պարզկա երկինք կտեսնեն, հետո սրեր (ցամաքազոր) և նիզակներ (օդային նավատորմ),
Որոնք հատկապես ձախ ուժերին ցավ կպատճառեն։

ԵՐԿՐՈՐԴԻՑ ՄԻՆՉԵՎ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՄԵԾ ԾՈՎԱՄԱՐՏԵՐ։

II, 40

Նվազ նշանակալի մի ժամանակամիջոցից հետո
Մեծ պատերազմ կբռնկվի ցամաքում և ծովում։
Ծովամարտերը կլինեն ամենակարևորները։
Մարդկանց դաժանությունը ավելի վատ կլինի, քան պատերազմն ինքը։

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՋՈՐԴՈՒՄ Է ԵՐԿՐՈՐԴԻՆ։ ԱՏՈՄԱՅԻՆ ՀՐԹԻՌՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ։

II, 46

Մարդկանց (զինվորների) մի մեծ հավաքից հետո՝ նախապատրաստվում է մի ավելի մեծը.

Տիեզերքի մեծ շարժիչը (Աստված) վերստին նորացնում է դարերը։
Հեղափոխությունն ու արյունահեղությունը, բարեկեցիկ կյանքից հետո, սով կբերեն, պատերազմ ու համաճարակ։
Երկնքում կրակ կերևա և մի հսկա հրթիռ կանցնի։

ՈՍԿՈՒ ԵՎ ԱՐԾԱԹԻ ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ։ ԿՅԱՆՔԻ ԹԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ։

III, 5

Որոշ ժամանակ անց երկու մետաղների (ոսկու և արծաթի) պակասություն կլինի,
Որը վրա կհասնի ապրիլ և մարտ ամիսների միջև,
Օ, կյանքի ինչպիսի թանկություն կտեսնեն։ Սակայն ազնիվ ցեղի պետական երկու ղեկավարներ
Օգնություն կբերեն ծովով ու ցամաքով։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ։ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱԽՃԱՆԸ։

VIII, 28

Ոսկու և արծաթի պատկերները՝ արժեզրկման այդ զոհերը,
Երբ անցնի կյանքի բարեկեցությունը, լափող խարույկի մեջ նետված կլինեն,
Հասարակությանը ծառայելուց՝ մաշված ու քայքայված,
Թղթադրամները և մետաղադրամները տոփանի տակ կդրվեն։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱՆՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ։

VII, 35

Կափսոսան կորցրած հարստության համար և կողբան, որ ընտրվել են,

(Պատասխանատու քաղաքական գործիչները), որոնք
կսխալվեն ժամանակ առ ժամանակ։
Շատ քչերը կցանկանան հետևել նրանց,
Հիասթափված այն բանից, ինչ իրենք շահելու են նրանց
վեճերից։

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ։ ԱՐԺԶՐԸԿԿՈՒՄԸ։ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ։ ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ։

III, 26

Պետությունների և կառավարությունների ղեկավարները
կեղծ նմուշներ կարտադրեն (ոսկու), (արժեթղթերի)։
Ի հայտ կգան մարգարեներ, որոնք իմաստազուրկ գուշակություններ կանեն (քաղաքագետների և տնտեսագետների ելույթները)։
Առատության եղջյուրը (սպառողական հասարակությունը)
դրա զոհը կդառնա, և բռնությունը կհաջորդի խաղաղությանը։
Մարգարեությունները կմեկնաբանվեն։

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։

VIII, 16

Այն վայրում, ուր Աստված կառուցել է իր եկեղեցին
(Հռոմ),
Մի այնպիսի մեծ և անակնկալ հեղափոխություն կծագի,
Որ չի լինի մի սարածք կամ ցամաք, որ հարձակման
ենթարկված չլինի։
Հեղափոխությունը Տոսկանա (Ֆլորենցիա) կհասնի օլիմպիական խաղերից հետո։

ԻՆՆՅԱԿԻ ԵՎՐՈՊԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԸ։ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՅՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ։

Նախանշան 41, հուլիս

Թալանչիները կողոպուտ կսփռեն մի մեծ երաշտի ընթացքում,
Որը երբևէ չտեսնված մի իրավիճակ կհաստատի։
Անչափ զգույշ կվերաբերվեն օտար երկրների հետ (Արևվելքի)։
«Իննյակի Եվրոպայի» կառավարությունների ղեկավարները կհրապուրվեն Չինաստանով։

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(1995 թ. մարտ-ապրիլ — 1998 թ. նոյեմբեր)

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ

ՆԵԽՈՒԺՈՒՄ ԻՏԱԼԻԱ

— Հովհաննես-Պողոս II-ի փախուստը Հռոմից։
— Հովհաննես-Պողոս II-ը մեկնում է Ֆրանսիա՝ Ռոնի ափամերձ շրջանը։
— Ժերի տարածքաշրջանի քաղաքների ամբակոծումը։
— Դիսաստրը։
— Հեղափոխությունը Բասկերի երկրում և Իտալիայում։
— Պապի մահը։
— Վատիկանի կողոպուտը։
— Պատերազմ Իտալիայում, Հունաստանում և Կարմիր ծովում։

Տեղեկանք.

Ըստ Նոստրադամուսի Երրորդ համաշխարհային պատերազմի ավարտը տեղի է ունենում «Զրհոսի դարաշրջանի մերձենալուն մոտ» (նախանշան 8), այն է՝ քրիստոնեական ժամանակագրության 1999 թվականից մեկ կամ երկու տարի առաջ, և նախորդում է 20-րդ դարի վերջին ընդհարմանը՝ «27 տարի տևող» (VIII, 77) նեռի պատերազմներին, որի մասին նա հստակորեն մարգարեանում է, որ այն սկսվելու է այդ նույն Զրհոսի դարաշրջանի սկզբում, այն է՝ «1999 թվականին» (X, 72)։ Ընդ որում, Երրորդ աշխարհամարտը, ըստ Նոստրադամուսի, տևում է «3 տարի և 7 ամիս» (IV, 95) և ավարտվում է «նոյեմբեր ամսին՝ Արևմուտքի հաղթանակով» (IV, 46; IX, 100)։ Միաժամանակ, պատերազմական գործողությունների հենց սկզբնական փուլում Հյուսիսային Իտալիայում արդեն իսկ հաղթանակ տարած հեղափոխական խմորումները Կենտրոնական Իտալիա՝ «Ֆլորենցիա (Տոսկանա) են հասնում միայն 1996 թ. օլիմպիական խաղերից անմիջապես հետո» (VIII, 16)։ Հետևաբար, Երրորդ համաշխարհային պատերազմը բռնկվում է 1995 թ. մարտ-ապրիլ ամիսներին, նրա ավարտն էլ, համապատասխանաբար (գումարելով 3 տարի և 7 ամիսը), գալիս հասնում է մինչև 1998 թ. նոյեմբեր ամիսը։

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ II-Ը ՓԱԽՁՈՒՄ Է։ ՌՈՒՍՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ։ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՎԹԻՁԻՆ։

IX, 99

Աքվիլոնի[1] *(ռուսական զորքերի) առաջխաղացումը կստիպի Պապին փախչել Հռոմից,*
Բանակը հողին կհավասարեցնի, կմոխրացնի գիպսե, կիր ու ավազից շաղախված պատերը.
Սակայն դրան հաջորդած հեղափոխությունը նրանց համար ծուղակ կլինի.
Մի վերջին ցնցում, որն ուղղություն կվերցնի դեպի նրանց սահմանը։

---

[1] *Աքվիլոն, կատաղի և սրընթաց հյուսիսային քամի, խորհրդանշում է Ռուսաստանը՝ Հյուսիսային կայսրությունը, որ ձգվում է Բալթիկ ծովից մինչև Վլադիվոստոկ։*

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ II-Ը ՌՈՆԻ ԱՓԵՐԻՆ։ ԱՔԱՂԱՂԻ ԵՎ ԱՄՆ-Ի ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ։

VIII, 46

(Հովհաննես)-Պողոս II-ը[1]՝ արևի աշխատանքը[2], կմահանա Ռոնի մերձակայքում՝
Փախած լինելով Տարասկոնի և Բոկերի ձորերի մոտ,
Քանի որ պատերազմը սարսափելի բաներ կանի գահի հետ (Սուրբ Պետրոսի).
Այնուհետև Աղաքաղը (Ֆրանսիայի թագավորը) և Արծիվը (Միացյալ նահանգները) երեք դաշնակից կունենան Ֆրանսիայում։

ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՌՄԲԱԿՈԾՈՒՄԸ։

VIII, 2

Տեսնում եմ Կոնդոմ, Օշ և Միրանդ քաղաքները
Եվ նրանց արվարձանները կրակե օղակի մեջ, որ իջնում է երկնքից,
Պապը Լիոնում միանում է պատերազմին,
Ապա (տեսնում եմ) Մարմանդի ռմբակոծումները՝ փլվող տներ՝ Գարոնում։

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ II-Ը ՏԱՐԱՍԿՈՆԻ ՄԵՐՁԱԿԱՅՔՈՒՄ։ ԱՁԱՏԱԳՐՈՒՄ ՍԱԼՈՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄՈՆԱԿՈ։

IV, 27

Սալոնի մոտ «արևի աշխատանքը» (Հովհաննես-Պո-

---

1 Նոստրադամուսը, ինչպես միշտ, երկու իմաստով է կիրառում Պոլ (Պողոս) անունը, որպես Հովհաննես-Պողոսի անվան (Ժան-Պոլ) մի մաս և Լեհաստանի ֆրանսերեն անվանման (Pologne)՝ առաջին վանկը նշելու համար Պապի ծագումը։

2 Mensolée բառը, որ Նոստրադամուսի հորինվածքն է, կազմված է լատիներեն «manus»՝ ձեռք, մարդու գործիք, աշխատանք և «sol»՝ արև արմատներից, որն համապատասխանում է Մալաքիասի մարգարեությունների գրքում Հովհաննես-Պողոս II-ին վերագրված կարգախոսին՝ «de labore solis»՝ արևի աշխատանք։

զոս II-ը), ապա Տարասկոնում, Էքս-ան-Պրովանսից մինչև Մոնակո,
Այնտեղ, որտեղ դեռ կանգուն է բրգաձև լեռը,
Ֆրանսիացիները կազատագրեն Դանիայի արքայազնին։
Փրկիչը անարգված կլինի Արտեմիսի տաճարում[1] (Թուրքիայում)։

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ II-Ի ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԲԱՆՏԱՐԿՎԱԾ ԲԻԳՈՐՈՒՄ։

X, 29

(Հովհաննես)-Պողոս II-ի՝ արևի աշխատանքի հետևորդները, թաքնված լինելով Կապրի կղզում[2],
Կբանտարկվեն և կտարվեն Էնոբարբուսի[3] (հեղափոխականների) կողմից։
Նրանց բանտ կառաջնորդեն, ինչպես ընտանի կենդանիներին,
Տանելով Բիգորի միջով՝ Տարբի (Լուրդի՞) մերձակայքում։

ՊԱՊԻ ՄԱՀԸ ԼԻՈՆՈՒՄ։ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՁԱԽԵՐԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ։

II, 97

Հռոմի Պապ, մի՛ մոտենա այն քաղաքին,
Որը երկու գետ է ոռոգում (Լիոն)։
Քո արյունը կհոսի այդ վայրին մերձ,

---

[1] Դիանա, հուն. Արտեմիս, նրա անունը կրող ամենահռչակավոր տաճարը, անկասկած, Եփեսոսինն է։ Եփեսոսը փոքրասիական քաղաք էր, որն այսօր գտնվում է Թուրքիայի տարածքում։

[2] Կղզի Նեապոլի ծովածոցում։

[3] Էնոբարբուսը Նոստրադամուսի համար կործանարար հեղափոխական ուժերի խորհրդանիշն է։ Դոմիցիուս Էնոբարբուսը Ներոնի հայրն էր։ Թաղված լինելով ամեն տեսակ ոճիրների մեջ՝ նա գիտակցում էր իր անամոթ ստորությունը, քանի որ նրան են վերագրում հետևյալ բառերը. «Ագրիպինից և ինձանից միմիայն հրեշ կարող էր ծնվել»։ Այստեղից էլ Հիտլերին տված անունը՝ Ներոն։

Նաև քո յուրայիններթի, երբ կծաղկի վարդը[1] (ձախերն անցնեն իշխանության գլուխ)։

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ II-Ի ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՇԵՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ։

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ II-Ը ՈՐՊԵՍ ՁԵՌՆԵՐԵՑ, ԶԳՈՒՇԱՎՈՐ, ԲԱՐԻ ԵՎ ՄԵՂՄ ՄԻ ՊԱՊ։

X, 12

Նա, ով Պապ կընտրվի, ծաղրի կենթարկվի իր ընտրողների կողմից։
Այդ ձեռներեց և զգուշավոր անձնավորությանը հանկարծակիորեն կտիպեն լռել։
Նրան կսպանեն իր չափազանց մեծ բարության և մեղմության պատճառով։
Սարսափով համակված՝ նրան սպանելու կտանեն գիշերը։

ՊԱՊԻ ՄԱՀԸ ԼԻՈՆՈՒՄ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՏԱՍՆԵՐԵՔԻՆ։ ՆՐԱ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆՏԵԼԻՄԱՐ։

IX, 68

Մինչև Մոնտելիմար Պապը կկորցնի իր հռչակը։
Նրա դժբախտությունը վրա կհասնի Սառն և Ռոն գետերի միաձուլման վայրում (Լիոն)՝
Անտառում թաքնված զինվորների ձեռքով, դեկտեմբերի 13-ին։
Ավելի սարսափելի բան (Սուրբ Պետրոսի) գահին երբևէ պատահած չի լինի։

---

[1] Վարդը սոցիալիստական կուսակցության խորհրդանիշն է։

ՅՈԹ ՕՐ ՇԱՐՈՒՆԱԿ ԵՐԵՎԱՑՈՂ ԳԻՏԱՍՏՂԸ։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ։ ՊԱՊԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է ՀՌՈՄԻՑ։

II, 41

Գիսաստղը կփայլի յոթ օր շարունակ։
Երկնքում երկու արև կերևա.
Մեծդի Ցլաշունը[1] (անգլիացի ղեկավարը) կոռնա ողջ գիշեր,
Երբ Պապը փոխադրվի երկրից։

ՎԵՃ՝ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ՝ ԳԻՍԱՍՏՂԻ ՀԱՅՏՆՎԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ։ ԲԱՍԿԵՐԻ ԵՐԿԻՐԸ ԵՎ ՀՌՈՄԸ ԶՈՀ ԵՆ ԳՆՈՒՄ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ։

II, 43

Գիսաստղի ի հայտ գալու ընթացքում
Երեք պետական մեծ ղեկավարներ թշնամացած կլինեն.
Նրանք հարվածներ կստանան երկնքից, և գետինը կշարժվի։
Ստորին Պիրենեյան լեռները, Պո և Տիբեր[2] գետերը կցընցվեն, նրանց ափերին սատանան կհաստատվի։

ԳԻՍԱՍՏՂԻ ՀԱՅՏՆՎԵԼԸ ՓՈՔՐ ԱՐՋԻ ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹՅԱՆ ՄՈՏ, ՀՈՒՆԻՍ ԱՄՍԻՆ։ ՊԱՏԵՐԱԶՄ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ, ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՒՄ։ ՊԱՊԻ ՄԱՀԸ։

VI, 6

Գիսաստղը կհայտնվի Փոքր արջի համաստեղության մոտ
Ոչ ուշ, քան հունիսի 21-ին։

---

[1] Այս խորհրդանիշը Նոստրադամուսի կողմից մեկ անգամ արդեն գործածվել է անգլիացի մի ղեկավար գործչի՝ Չերչիլին բնորոշելու առումով։

[2] Վատիկանը գտնվում է Տիբեր գետի վրա։

Սուղը,[1] Սիեննը[2], Բեովտիան[3] ու Կարմիր ծովը կցնցվեն։
Հռոմի պապը կմեռնի այն գիշեր, երբ գիսաստղը հայտնվի։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

— Խորհրդային բլոկի և մահմեդականների վեճը։
— Պետության ղեկավարի փախուստը։

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՓԱԽՈՒՍՏԸ։ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ՄԱՀՎԱՆ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ։

IV, 45

Ընդհարման պատճառով պետության ղեկավարը կթողնի իշխանությունը։
Ռուսաստանի պետության ամենամեծ ղեկավարը աղքատությունից կհյուծվի,
Եվ նրա հպատակները մահվան ճիրանների մեջ կլինեն, որից քչերը կփրկվեն։
Նրանք բոլորն էլ կկոտորվեն. մի անձնավորություն կվկայի այդ մասին։

ԲՈՆԱԿԱԼԸ ՄԱՀՎԱՆ Է ԴԱՏԱՊԱՐՏՎՈՒՄ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀՈՂՈՒՄ։ ՌԵՎԱՆՇԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԸՆԴԴԵՄ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ։ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ։

I, 94

Բոնակալը մահվան կդատապարտվի Լուսնի (մահմեդական) նավահանգստում,
Բայց դա չի լինի, եթե միայն կրկին ազատության ձգտեն։
Մի նոր պատերազմ կհրահրվի վրիժառության և ուսանշի մտադրությամբ։

---

[1] Քաղաք Իտալիայում։
[2] Ամրոց-քաղաք Իտալիայի Տոսկանա գավառում։
[3] Մարզ Հունաստանում, նկատի ունի ողջ Հունաստանը։

Հանրապետությունը, սարսափից կարկամած, բռնությամբ կհատուցի։

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ։ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։ ԶԱՎԹԻՋՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։

VI, 42

Իշխանությունը լքված կլինի Ֆրանսիական Հանրապետությունից
Մեծ լուսնի (մահմեդական զորքերի) պատճառով, որոնք լայն գործողություններ կծավալեն,
Եվ իրենց իշխանությունը կտարածեն Իտալիայում,
Որը կկառավարի մի անձնավորություն, որն իրեն խելացի մարդու տեղ կդնի։

V ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ։ ՎԵՃ ՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՇՆԱԿԻՑ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ։

I, 3

Երբ հեղափոխության մահիճը ջախջախվի,
Եվ երբ հեղափոխականները անտրտունջ հնազանդվեն իրենց գլխին գալիք դժբախտությանը,
Հանրապետությունը կվնասվի այն պահին,
Երբ սպիտակները (մահմեդականները) և կարմիրները (Արևելյան ուժերը) անհամաձայնության մեջ կլինեն։

ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

— Մալթայի նշանակությունը։
— Լիբիայի պետության ղեկավարը։
— Իսրայելը։

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ։ ԻՍՐԱՅԵԼԱ-ԱՐԱԲԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ։

II, 95

Բնակեցված վայրերը անբնակ կդառնան (ատոմային աղտոտվածություն)
Մեծապես բաժան-բաժան արված տարածքներում (Պաղեստին)։
Իշխանությունները հանձնված կլինեն անընդունակ կառավարությունների։
Մահ և խժդժություններ կտիրեն երկու եղբայրների (արաբների և հրեաների) միջև։

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԸՆԴՀԱՐՄԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ։

I, 9

Արևելքից կծագի ուխտադրուժ գործողությունը,
Որը կհարվածի Ադրիատիկ ծովին և Ռոմուլուսի ժառանգներին (իտալացիներին)։
Լիբիայի նավատորմի հետ
Ցնցվե՛ք, Մալթայի ու նրա արշիպելագի բնակիչներ։

ԳՆԴԱՊԵՏ ՔԱԴԱՖԻՆ ՈՏՔԻ Է ՀԱՆՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԴԵՄ։ ՄԵԾ ԹԱԳԱՎՈՐԸ՝ ՁԱՐԳԱՑԱԾ ՄԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴԴԵՄ ԱՐԱԲՆԵՐԻ։

II, 27

Արևմուտքում հզորանալով լիբիական պետության մի ղեկավար
Բորբոքելու կգա բազում արաբների ֆրանսիացիների դեմ,
Հետո հանդես կգա զարգացած և բարեհամբույր մի անձնավորություն,
Որը թարգմանել կտա արաբերենը ֆրանսերենի։

ՀԱԿԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՍԻՐԻԱՅՈՒՄ։

III, 61

Մահմեդականների հակաքրիստոնեական աղանդը և մեծ հրոսակախումբը
Գլուխ կբարձրացնի Իրաքում և Սիրիայում՝
Եփրատի ափերի մոտ, զրահապատ զորքով (ցամաքազոր),
Եվ քրիստոնեական հավատը կդիտարկվի որպես թշնամական։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԲՆԵՐԻ ԵՎ ՀՐԵԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ։

II, 34

Խելագար զայրույթը կատաղի մարտի
Երկաթ կփալեցնի միևնույն սեղանի շուրջ նստած եղբայրների միջև.
Նրանց առանձնացնելու համար՝ հարկ կլինի նրանցից մեկին մահացու վիրավորել տարօրինակ ձևով.
Նրանց հպարտ մենամարտը վնաս կպատճառի Ֆրանսիային։

ԻՏԱԼԻԱՆ ԶԱՎԹՎԱԾ։ ԻՍՊԱՆԻԱՆ ՆԵՐՔԱՇՎԱԾ ԸՆԴՀԱՐՄԱՆ ՄԵՋ։ ԼԻԲԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ։

V, 14

Այն դարաշրջանում, երբ պատերազմը Լեոն[1] հասնի, բանտարկյալ Իսպանիան
Ընդհարման մեջ ներքաշված կլինի Լիբիական պետության ղեկավարի կողմից.
Իտալիան անպասելիորեն գրավված կլինի։
Այնուհետև Հռոմում հաստատված կարմիր իշխանությունը ջախջախված կլինի Ֆրանսիայի թագավորի կողմից։

---

[1] Լեոնը Իսպանիայի 15 հնագույն գավառներից մեկն է։

ՌՈՒՍ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀՌԵՆՈՍԻ ԵՎ ԴԱՆՈՒԲԻ ՎՐԱ։ ՄԱՐՏԵՐ ՄԱԼԹԱՅՈՒՄ ԵՎ ՋԵՆՈՎԱՅԻ ԾՈՎԱԾՈՅՈՒՄ։

IV, 68

Այն տարի, երբ պատրաստ կլինեն խաբեությունից հեռանալուն,
Ասիայի (ԽՍՀՄ) և Աֆրիկայի (արաբական երկրներ) երկու ամենամեծ պետություններ
Կգան, կհասնեն մինչև Հռենոս և Դանուբ։
Ողբ ու արցունք կլինի Մալթայում և Ջենովայի ծովածոցում։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԶՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ։ ՖՐԱՆՍԻԱՆ ԵՎ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՆ ՆԵՐՔԱՇՎՈՒՄ ԵՆ ԸՆԴՀԱՐՄԱՆ ՄԵՋ։

II, 60

Պյունիկյան (մուսուլմանական) չար հավատը խզում կհրահրի Միջին Արևելքում,
Մի նշանավոր հրեա անձնավորության պատճառով Ռոնը, Լուարը և Տաժը փոփոխություններ կտեսնեն,
Երբ ոսկու տենդը անկում կապրի, նավատորմը կխորտակվի,
Նավաստիների արյունն ու մարմինները կլողան։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՂՄՈՒԿ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ։ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ՊԻՐԵՆԵՅԱՆ ԼԵՌՆԵՐՈՒՄ։

VI, 88

Մի մեծ երկիր կամայանա,
Երբ զորքերը հավաքվեն Հեբրոնի (Իսրայել) մերձակայքում,
Այն ափոփանք կգտնի Պիրենեյան լեռների կողմերում,
Երբ որ մայիս ամսին երկրաշարժեր լինեն։

ԻՍՐԱՅԵԼԻՑ ՍԿՍՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ՄԻՆՉԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ։

III, 12

Հերրոնում (Իսրայել) ծագած հուղումները կհասնեն մինչև Պո, Տաժ, Տիբեր, Հռոմ, Լեմանի լիճ և Արետին[1]*։*
Գարոնի ափերին տարածված քաղաքների (Բորդո և Թուլուզ) երկու մեծ զեկավարներ Կրանտարկվեն, մահվան կդատապարտվեն և ջրահեղձ կարվեն. մարդկային զոհաբերության սկիզբը կդրվի։

ԸՆԴՀԱՐՈՒՄ ԱԴՐԻԱՏԻԿ ԾՈՎՈՒՄ։ ԵԳԻՊՏՈՍԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ։

II, 86

Մի նավատորմ կխորտակվի Ադրիատիկ ծովի մոտ, Երկիրը կցնցվի, երբ օդային մի տորմիզ կործանվի։ Եգիպտոսը, մահմեդական զորքերից ուռճացած, կցնցվի։ Գլխավոր զորահրամանատարից կպահանջեն հանձնվել։

ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ։ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

Բանալի բացատրություններ.

— *ԽՍՀՄ — արջ (*URSUS, *Էսկլավոնիա (Ստրուկների երկիր), Աքվիլոն (հյուսիսային սառը քամի), Տրամոնտան (Բևեռային աստղ), Նորմաններ, Բորիսթենես, Կարմիրներ, Ալանիա։*
— Վարշավայի դաշնագիր — *գրիֆոն, շահեն, յոթ երկրներ։*
— Հովհաննես-Պողոս II — *Մեմմել (լը Նիեմեն), Պոլ Մանսոլ (Պողոս՝ արևի աշխատանք), մեծ եպիսկոպոս, աղնվազարմ, Պենելոն (Պոլեն՝ լեհ),*

---

[1] *Արետին կամ Արեցցո, քաղաք Տոսկանայի մարզում (Իտալիա)։*

փոխերեց (առաջնորդական տեղապահ), Մուտոն (Ոչխար), Սոլ (Արև)։

— Մահմեդական աշխարհ — Բարբարոսներ, պյունիկ, Հաննիբալ։

— Մեջբերված մահմեդական երկրներ — Ալժիր, Թունիս, Մարոկկո, Լիբիա, Պարսկաստան (Իրան-Նիրա-Նարի), Միջագետք (Իրաք), Կարմանիա (Աֆղանստան), Բյուզանդիա (Թուրքիա)։

Պատերազմը

— Պատերազմ 45 (Բորդո, ժնև, Բաքու), 48 զուգահեռականների և խեցգետնի արևադարձի միջև։

— Հովհաննես—Պողոսի նախազգուշացումները Սեն-Դենիում։

— Ներխուժում Մեծ Բրիտանիա։

— Ռուսները Հարավսլավիայում։

— Ներխուժում Իտալիա և Շվեյցարիա։

— Ներխուժում Ֆրանսիա. ավերակվող քաղաքները՝ Բորդո, Լանգոն, Նանտ, Տուր, Ռեմս, Փարիզ, Լիոն, Մարսել, Լա Սեն-սյուր-Մեր, Ագ, Նարբոն, Բեզիեր, Կարկասոն, Թուլուզ, Պո, Բայոն։

— Ներխուժում ԳՖՀ և Ավստրիա։

— Կարմիր բանակի հայազգի գլխավոր զորահրամանատարը։

— Փարիզի և Հռոմի գավթումը։

— Գրոհ Իսպանիայի և Պորտուգալիայի վրա։

— Ներխուժում Հունաստան մուսուլմանական զորքերի կողմից։

— Հայաստանը Արևմտյան խմբակցության կազմում ընդդեմ ռուս-մուսուլմանական դաշինքի։

— Իրաքն Արևմուտքի դեմ, նրա պարտությունը։

— Տուրի ավերումը։

— Ստամբուլն ավերվում է Ֆրանսիայի կողմից։

— Մարտեր Սև ծովում։

— Թունիսը, Ալժիրը և Թուրքիան ապստամբում են։

— Պորտուգալիայի դերը։

— Հովհաննես-Պողոս II-ի դերը։

ՊԱՏԵՐԱԶՄ 45-ՐԴ ԶՈՒԳԱՀԵՌԱԿԱՆՈՒՄ՝ ԲՈՐԴՈ, ԺՆԵՎ, ԲԱՔՈՒ[1] ԺՆԵՎԻ ԱՎԵՐՈՒՄԸ։

VI, 97

Պատերազմի կրակը կտարածվի 45-րդ զուգահեռականի երկայնքով
Եվ կմոտենա մեծ նոր մայրաքաղաքին (ԺՆև)[2]։
Կրակի լեզվակները սրընթաց կթռչեն ծովերի վրայով,
Երբ ցանկանան վերսկսել պատերազմը նորմանների (ռուսների) դեմ։

ՊԱՏԵՐԱԶՄ 48-ՐԴ ԶՈՒԳԱՀԵՌԱԿԱՆԻ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ԱՐԵՎԱԴԱՐՁԻ ՄԻՋԵՎ։ ՋՐԵՐԻ ԱՂՏՈՏՈՒՄԸ։

V, 98

48-րդ զուգահեռականից մինչև Խեցգետնի Արևադարձի սահմանները
Շատ մեծ երաշտ կլինի։
Ձկները կսատկեն ծովերում, գետերում, լճերում՝ չորացնող շարունակական շոգի պատճառով։
Բեարնն ու Բիգորը աղետի կմատնվեն՝ հրկիզող ռմբակոծության պատճառով։

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ։ ՊԱՊԻ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ։ ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ՝ ԱՐՀԱՄԱՐՀՎԱԾ ՁԱԽԵՐԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ։ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ։

Վեցյակ 46

Ձենքի մատակարարը (Ռուսաստան) Արևմուտքին փախուստի կմատնի։

---

[1] Սույն քառյակի վերնագրում Բաքու տեղանվան հիշատակությունը տալիս ենք ըստ Նոստրադամուսի խոշորագույն հետազոտող Ժան Շառլ դը Ֆոնտբրյունի և այլոց մեկնաբանությունների։

[2] ԺՆև ֆրանսերեն նշանակում է «նոր երկիր, հող», այն գտնվում է 46-րդ զուգահեռ'յանի մոտ։

Ո՛չ արյունախումից (հեղափոխությունից) սերած մարդիկ (ձախերը), ո՛չ գերմանացիները
Ունկն չեն դնի իմ հանձնարարականին, երբ պատերազմի վտանգների մասին Մուսոնը (Պապը) ահազանգի իր գահակալության ընթացքում,
Հանրապետության օրոք։ Այդժամ, Ֆրանսիա,
Դու կտեսնես քո ամենամեծ դժբախտությունը։
Այնուհետև Միապետությունը կվերադառնա։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԴԱՇՆԱԳՐԻ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆԸ։ ՊԱՊԸ, ՓԱՐԻԶԸ ԵՎ ՊՐՈՎԱՆՍԸ ԳՐՈՀՎԱԾ՝ ՀԱԿԱՌԱԿ ԼԵՀԱՍՏԱՆԻ։

II, 88

Մեծ պատերազմի ընթացքը, որ ավերում կբերի,
Կհասցնի այն բանին, որ նրանք, ովքեր անվանվում են յոթ (Վարշավայի դաշնագրի երկրներ) հինգից ավելի չեն լինի։
Օտար երկրներ կներքաշվեն պատերազմի մեջ,
Ամենամեծ և ծանրակշիռ մեկ երրորդը (միասնության)[1] չի կարողանա երաշխավորել Պապի, Փարիզի և Էքս-ան-Պրովանսի անվտանգությունը։

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՎՐԱ ՆԵՏՎԱԾ ՀՐԹԻՌՆԵՐԸ։ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ։ ԿԱՐՄԻՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ։

I Վեցյակ 27

Երկնքից եկած կրակը (հրթիռները) կհասնի Արևմուտք և միջնաշխարհից (մահմեդական աշխարհ) կսլանա մին-

---

[1] Վարշավայի դաշնագրի երկրների փոխադարձ մակերևույթն այս է. ԳԴՀ՝ 108178 կմ², Չեխոսլովակիա՝ 127876 կմ², Ռումինիա՝ 237500 կմ², Բուլղարիա՝ 110912 կմ², Հունգարիա՝ 93032 կմ², Լեհաստան՝ 312677 կմ։ Այսպիսով, Լեհաստանը կազմում է ԽՍՀՄ-ի արբանյակների միության մեկ երրորդը։

չև Բարձրացողը (Բարձրացող Արևի Կայսրությունը՝ Ճապոնիա)։
Որդերը կմեռնեն սովից՝ արմատ անգամ չեն գտնի կերակրվելու համար։
Դա Երրորդ համաշխարհային պատերազմը կլինի,
Երբ Կարմիրները կփայլեցնեն կրակները պատերազմական,
Որոնք կթագավորեն, և իվերջո սով կտիրի։

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ։

V, 73

Կաթոլիկ եկեղեցին հալածված կլինի Լեհաստանում,
Եվ եկեղեցիները կսեփականազրկվեն։
Մայրը (եկեղեցին) կմերկացվի իր իսկ զավակների կողմից,
Եվ արաբները դաշինք կկնքեն լեհերի (Վարշավայի դաշնագրի) հետ։

ՌՈՒՍՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ։

II, 68

Մեծ կլինեն Աքվիլոնի (ռուսների) պատերազմական ջանքերը.
Եվ նա մուտք կունենա դեպի Ատլանտյան օվկիանոս։
Կառավարությունը անկայուն կդառնա Անգլիայում,
Եվ Լոնդոնը, նավերով շրջապատված, կցնցվի։

ՌՈՒՍՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԳԾՀ ԵՎ ԻՏԱԼԻԱ։ ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՆ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՏՆՎԱԾ։

II, 32

Բարեկեցության կաթից հետո՝ ժողովրդի արյունն է, որ կհոսի Հարավսլավիայում,

Երբ ընդհարումը սկսված լինի, ինչպես նաև աղետը Բալ-
լենշտեդտի մոտ։
Պատերազմի արձագանքը մեծ կլինի ողջ Էսկլավոնիայում
(Ռուսաստանում)։
Հենց այդ ժամանակ էլ մի պատուհաս կծնվի Ռավեննա-
յում և նրա մերձակայքում։

ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ԻՏԱԼԻԱ ԵՎ ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱ։ ՆԱՎԹԻ ՊԱԿԱՍՈՒ-ԹՅՈՒՆ։

II, 84

Կամպանիա, Սիեն և Օմբրի գավառներում (Իտալիայի)
6 ամիս և 8 օր շարունակ ոչ մի կաթիլ նավթ չի լինի։
Օտար լեզվով խոսք կհնչի Դալմատիայում[1] (ռուսերեն
կամ արաբերեն),
Որը կսլանա և կամայացնի ողջ աշխարհաշրջանը։

ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍԵՎ ԾՈՎՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎ-ՍԼԱՎԻԱՅՈՒՄ։ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻՑ՝ ԱՄԵՐԻԿԱ-ՅԻՆԵՐԻ ԱՓԷՋՔԸ (՞)։

IX, 60

Մահմեդականների կողմից ընդհարում կսկսվի Սև ծովում,
Եվ այն արյունը, որ նրանք կհեղեն, կցնցի Դալմատիան
(Հարավսլավիան),
Ուր մահմեդականների մեծ ղեկավարը կհասնի իր դա-
գաթնակետին։
Ժողովուրդը կցնցվի, հետո Պորտուգալիայից օգնություն
կհասնի։

---

[1] Դալմատիա, ներկայիս Հարավսլավիայի տարածքը։

ՌՈՒՍՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅՈՒՄ ԵՎ ԱԴՐԻԱՏԻԿ ԾՈՎՈՒՄ։ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ։ ԻՍՊԱՆԻԱՅԻՑ ԵՎ ՆՐԱ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ։

IX, 30

Պոլայում[1] կհայտնվեն Սուրբ Նիկոլայից[2] (Ռուսաստանից) եկածները (դեկտեմբերի 6-ին),
Հյուսիսի մարդկանց (ռուսների) վտանգը կհասնի հարավսլավական ափերին։
Թուրքիայի ղեկավարը գթություն կհայցի։
Այնուհետև Ֆիլիպ V-ի[3] ժառանգը Իսպանիայից օգնություն կհասցնի։

ԹՈՒՐՔԻԱՆ ԿՈՂՈՊՈՒՏԻ ՄԱՏՆՎԱԾ ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ։

VII, 83

Ամենամեծ օդային տորմիղը դուրս կգա Զարայի[4] նավահանգստից՝
Պատերազմական գործողություններ սկսելու համար Թուրքիայում,
Նա թշնամիներին մեծ կորուստներ կպատճառի և դաշինք չի կնքի Թուրքիայի հետ.
Մեծ կողոպուտ կլինի և Թուրքիայի երկու երրորդը ավարի կմատնվի։

---

[1] Պոլան հարավսլավական նավահանգստային քաղաք է Ադրիատիկ ծովի ափին, Տրիեստից հարավ։ Ռազմական նշանակություն ունեցող նավահանգիստ է։

[2] Սուրբ Նիկոլան, որի տոնը նշում են դեկտեմբերի 6-ին, Ռուսաստանի հովանավորն է։

[3] Ֆիլիպ V-ը Բուրբոնների տան ղեկավարն է Իսպանիայում։ Նոստրադամուսն այստեղ նկատի ունի Իսպանիայի թագավորին։

[4] Նավահանգիստ Դալմատիայում՝ Հարավսլավիայում, Ադրիատիկ ծովի ափին։

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ։

Նախանշան 60, ապրիլ

Ժամանակը անպարկեշտ կդառնա, ախտահարույց և բռնադատ՝
Մահմեդականների կատաղի հարձակման և արշավանքի պատճառով։
Մեծամեծ աղետներ են պատրաստվում ապրիլին։
Ամենամեծ անձնավորությունները ծաղրուծանակի կենթարկվեն՝ բացառությամբ երկուսի։

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ԱՓԸ ԿՈՂՈՊՎԱԾ

II, 4

Մոնակոյից մինչև Սիցիլիա
Ողջ ափը կամայացվի։
Չի լինի մի քաղաք կամ արվարձան,
Որ խուսափի մահմեդական զորքերի թալանից։

ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ԳԴՀ, ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ԱՓԵՐԸ ԵՎ ԱՏԼԱՆՏՅԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ։ ԺՆԵՎԻ ԿՈՎԵՆՑԻԱՅԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼԸ։

V, 85

Արևմտյան Գերմանիան և նրա հարևանները (Շվեյցարիա, Հոլանդիա, Ֆրանսիա և Բելգիա)
Պատերազմական վիճակի մեջ կընկնեն ռուսական զորքերի անհաշվելի բազմության պատճառով։
Պատերազմական նավահանգիստները պատված կլինեն օդանավերով[1] և նավերով,
Եվ Լեման լճի սխալները (Ժնևի կոնվենցիան ու համաձայնագրերը) մերկացված կլինեն։

---

[1] Օդանավերի փոխարեն նոստրադամուսը գործածում է Հովհաննու «Հայտնությունից» եկող ծղրիդներ անվանումը։

ԻՏԱԼԻԱՅԻ ՈՄԲԱԿՈՇՈՒՄԸ։

IV, 48

Օդանավերի այնպիսի մի քանակություն օդ կբարձրացվի
Պոյի բերքառատ և ընդարձակ հարթավայրի վրայով,
Որ արևը կխավարի։
Այդ օդանավերը ավերածություն ու ամայություն կբերեն։

ԿՈՂՈՊՈՒՏ ԵՎ ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ԱՓԵՐԻՆ։

III, 82

Լերենի կղզիները[1], Անտիբը և Նիսի հարևան քաղաքները
Կամայացվեն օդից և ցամաքից եկած ուժերի կողմից,
Եվ հրասայլերով՝ բերված օդով ու ցամաքով, և պատմության քամին համընթաց կլինի նրանց։
Բնակիչները կբանտարկվեն, կկոտորվեն, կկապկպվեն, կթալանվեն՝ առանց հաշվի առնելու պատերազմական օրենքները։

ՖՐԱՆՍ-ԻՍՊԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՐԵՆԵՅԱՆ ԼԵՌՆԵՐՈՒՄ։ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ։ ՌՈՆԸ ԵՎ ԼԱՆԳԸԴՈՔԸ ԸՆԴՀԱՐՄԱՆ ՄԵՋ ՆԵՔԱՇՎԱԾ։

IV, 94

Երկու մեծ վիճակիցները քշված կլինեն Իսպանիայից։
Երկուսից ավագը (Խուան Կարլոս I) կպարտվի Պիրենեյան լեռների ստորոտում։
Կարմիր նավատորմը կգրավի ծովը և արյուն կհոսի Ռոնի ափերին, Լեման լճում և Գերմանիայում։
Նարբոնը, Բեզիերը և Ագը աղտոտված կլինեն (քիմիական զենքի օգտագործումը)։

---

[1] Ֆրանսիական կղզիներ Միջերկրական ծովում, Վարի ծովափին։

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։

X, 33

Դաժան խումբը մահմեդական խռովարարների
Կժամանի՝ զգեստների տակ զենքերը թաքցրած։
Նրանց ղեկավարը կտիրի Ֆլորենցիային և այդ վայրը երկու անգամ կրակի կմատնի՝
Նախօրոք խաբեբա ու անօրեն մարդկանց (լրտեսների) ուղարկելով։

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԻՏԱԼԻԱ։

II, 30

Մի անձնավորություն, որը Հաննիբալի պես հարություն կտա Կարթագենի սարսափազդու աստվածներին,
Կվախեցնի մարդկանց։
Ամսագրերն այլևս երբեք չեն կարողանա տեղի ունեցած սարսափների մասին պատմել հռոմեացիներին (իտալացիներին)
Նրանց շփոթության պատճառով։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՎ ՌՈՒՍՆԵՐԸ։ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ՖՐԱՆՍԻԱ։

X, 86

Արծվաբույծի նմանվող մեկը կդառնա Արևելյան Եվրոպայի ղեկավար,
Որը կդաշնակցի Աքվիլոնի (ռուսների) հետ։
Նա կառաջնորդի մահմեդականների ու կարմիրների մեծաքակաև զորքին,
Որոնք կարշավեն ընդդեմ Բաբելոնի Արքայի (Փարիզ, Լոնդոն...)[1]։

---

[1] Մեծ Բաբելոն, արդի Բաբելոն սովորաբար անվանում են մեծ կենտրոններին, ինչպիսիք են Լոնդոնը, Փարիզը և այլն։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԱՓ Է ԻՋՆՈՒՄ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ։ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՆ ԶԱՎԹՎԱԾ։

VII, 51

Թուրք ղեկավարը խաղաղության առաջարկություն կանի՝
Վերագրավելուց հետո Կորդոբան հանուն մահմեդական հավատի,
Երկար ճանապարհ անցնելուց հետո նա կանգ կառնի իր զավթումների ընթացքում,
Երբ, ծովն անցնելով, Վարշավայի դաշնագրի երկրները զավթած կլինեն Քյոլնը (Արևմտյան Գերմանիան)։

ԱՏՈՄԱՅԻՆ ԶԵՆՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ։

II, 91

Արևելքում արևանման մի մեծ կրակ կերևա, աղմուկն ու բոցերը պատերազմի
Կհասնեն մինչև Ռուսաստան. կմահանան շրջանագծի մեջ (ատոմային կամ նեյտրոնային ռումբ)
Եվ աղաղակներ կլսվեն։
Պատերազմի, կրակի, սովի պատճառով մարդիկ մահվան կսպասեն։

ՌՈՒՍ-ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ

X, 69

Նշանակալի վերելքը (իշխանության մեջ) մի նոր ղեկավարի՝ հնի անհայտացումից հետո,
Մուսուլմաններն ու ռուսները այնքան մեծ ջանքեր կգործադրեն,
Որ հարևան մայրաքաղաքում (Վարշավայի դաշնագիր) մեծ թվով թևավոր (օդային) զորքեր կբարձրանան,
Եվ հյուծվածը դժվարին դրությունից դուրս կգա՝ չնայած իր անպաշտպանությանը։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎՈՒՄ։ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԸ ԱԴՐԻԱՏԻԿ ԾՈՎՈՒՄ, ՆՐԱՆՑ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ։

III, 23

Երբ ֆրանսիական նավատորմն անցնի Լիգուրիայի կողմերով,
Նա կպատնեշվի կղզիների (Սարդինիա, Կորսիկա և Սիցիլիա) և ծովի միջև։
Մահմեդական զորքերը առավել մեծ ուժերով նրա դեմ կելնեն Ադրիատիկ ծովում։
Ի վերջո նա ամբողջովին կջախջախի մահմեդական զորքերին։

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԶՈՒՄԸ ԻՐԱՆԻ ՀԵՏ։

Վեցյակ 8

Առևտրական համաձայնագրերը ստորագրելուց քիչ առաջ
Մի դեսպան կժամանի Իրան, որպեսզի մի լուր տանի Ֆրանսիա։
Սակայն նա ընդունելություն չի գտնի և նրա հույսը զուր կլինի։
Նա այդ բանը իր հանդեպ վիրավորանք կհամարի
Եվ կձևացնի,
Թե ցանկանում է լքել երկիրը։

ՎԵՑԱՆԿՅՈՒՆԸ ԳՐՈՀՎԱԾ ՀԻՆԴ ԿՈՂՄԻՑ։ ԻՐԱՆԸ ՈՏՔԻ Է ՀԱՆՈՒՄ ԹՈՒՆԻՍԸ ԵՎ ԱԼԺԻՐԸ։ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԻՍՊԱՆԻԱՅԻ ՎՐԱ։

I, 73

Ֆրանսիան հինգ կողմից գրոհի կենթարկվի իր անտարբերության պատճառով։
Թունիսն ու Ալժիրը ոտքի կհանվեն նրա դեմ իրանցիների կողմից.

Լեոնը, Սևիլիան և Բարսելոնը կընկնեն
Եվ իտալական նավատորմը չի կարողանա ապահովել
նրանց անվտանգությունը։

ՄԻ ԱՆՎԱՆԻ ԱՆԳԼԻԱՑԻ ԵՎ ՎԵՑ ԱՆՎԱՆԻ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐ՝ ԳԵՐՎԱԾ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ։ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ՋԻԲՐԱԼԹԱՐՈՎ ԻՍՊԱՆԻԱ։ ԻՐԱՆԻ ՆՈՐ ԵՎ ԱՀԱՐԿՈՒ ՂԵԿԱՎԱՐԸ։

III, 78

Մեծ Բրիտանիայի ղեկավարը վեց գերմանացի ղեկավարների հետ
Գերված կլինեն ծովում Արևելցիների կողմից,
Որոնք կկտրեն-կացնեն Ջիբրալթարը և Իսպանիան,
Երբ Իրանի նոր, ահարկու ղեկավարը կարգադրություն անի։

ՌՈՒՍՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ։ ՎԻՇՏԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։

IV, 82

Կուտակված մեծաքանակ զորքը կմոտենա՝ գալով Ռուսաստանից։
Ավերողը հողին կհավասարեցնի հինավուրց մայրաքաղաքը (Փարիզը)։
Իտալիայում մեծ վիշտ կտեսնեն,
Եվ անհնարին կլինի հանգցնել պատերազմական մեծ կրակը, որը կշարունակի վառվել։

ՏՈՒՐԻ ԱՎԵՐՈՒՄԸ։ ՄԱՐՏԵՐ ՆԱՆՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՌԵՄՍ։ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԸ ՆՈՅԵՄԲԵՐԻՆ։

IV, 46

Պատերազմական գործողությունը խստագույնս դաժան կլինի։
Պահպանի՛ր քեզ, Տուր, մոտալուտ ավերումից։

Լոնդոնը (Անգլիան) և Նանտը (Ֆրանսիան) կպաշտպանվեն մինչև Ռեմս,
Եվ պատերազմը կտևի մինչև նոյեմբեր ամիսը։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՀՌԵՆՈՍԻ ԱՓԵՐԻՆ։ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱ, ԱՎՍՏՐԻԱ ԵՎ ԻՏԱԼԻԱ։ ՀԱՅԱԶԳԻ ՄԵԾ ԴՈՒՔՍԸ։

V, 94

Կտրել-անցնելով Մեծ Գերմանիան[1],
Բրաբանը և Ֆլանդրիան, Գենտը, Բրյուսելը և Բոլոնիան[2],
Կեղծ խաղաղություն հաստատելուց հետո, հայազգի մեծ դուքսը[3],
Կհարձակվի Վիեննայի (Ավստրիա) և Քյոլնի[4] վրա։

ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ՄԱՐՍԵԼ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՏԱԼԻԱ։ ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՆ ԵՎ ՊԱՐՍԻՑ ԾՈՅԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՆԱԿԵՏ։

IX, 28

Դաշնակիցների նավատորմերը Մարսելի նավահանգիստ կմտնեն,
Ցամաքազորը Վենետիկ կմտնի Հունգարիայի կողմից.
Զորքերը կուղևորվեն Պարսից ծոց և Հարավսլավիայի կողմը,
Որպեսզի ավերեն Սիցիլիան և Հյուսիսային Իտալիան՝ հրետանային կրակով։

---

[1] Արևմտյան Գերմանիան ավելի մեծ է, քան Արևելյանը։
[2] Քաղաք Իտալիայում, ամենանշանավորը Ռոմանիայի երկրամասում։
[3] Նկատի ունի Կարմիր Բանակի հայկական ծագումով զորահրամանատարի։
[4] Քաղաք Արևմտյան Գերմանիայում, Հռենոսի ափին։

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԱՎԵՐՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ։ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԻՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ։

VI, 85

Թրակիայի մեծ քաղաքը՝ Ստամբուլը, ավերված կլինի
Գաղիացիների (ֆրանսիացիների) կողմից. մահմեդականներից բոլոր նրանք, ովքեր ձերբակալված կլինեն,
Ազատ կարձակվեն Պորտուգալիայի մեծ դեկավարի կողմից՝
Սուրբ Ուրբանոսի տոնի և ամառային արևադարձի միջակայքում (մայիսի 25-ի և հունիսի 21-ի միջև)։

ՊԱՏԵՐԱԶՄ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ։ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ։

IV, 38

Մինչ թագավորը՝ բանակի ընդհանուր զորահրամանատարը, գրավի Հանրապետության հրապարակը,
Թուրքիայի դեկավարը բանտարկված կլինի Հունաստանում,
Որովհետև գրոհից առաջ մեկը մյուսի միսը կուտի,
Եվ, թիկունքից նեղվելով, կշարժվեն նրա թողած արյան հետքով։

ԲԼՈՒԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԸ՝ ԱԶԱՏԱՐԱՐ։ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՊԻ ՀԵՏ։ ԻՍՊԱՆԱՑԻՆԵՐՆ ՈՒ ՀԱՐԱՎՍԼԱՎԱՑԻՆԵՐԸ։ ԱՐԵՎԵԼՔԻ ՅՈԹ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ։

X, 44

Երբ կառավարության մեջ յուրայինները նրա դեմ լինեն,
Շագումով Բլուացի անձնավորությունը կհնազանդեցնի Հյուսիսային Իտալիան նվաճողներին՝
Ստանալով Լեհաստանի (Պապի), Իսպանիայի և Հարավսլավիայի աջակցությունը,

Այնուհետև հաճելի և նախախնամությամբ ուղարկված թագավորը կոչնչացնի յոթին (երկրներին)[1]։

ԱՐԵՎԵԼՔԻ ՅՈԹ ԵՐԿՐՆԵՐԻ ՋԱԽՋԱԽՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ։ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀՐԱՀՐԱԾ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՂԱԾԱՆՔՆԵՐԸ։

VII, 36

Աստված, աստվածային խոսքը՝ հեղափոխության մատնված,
Յոթ երկրների Կարմիրները Թուրքիա բերելով կջախջախվեն։
Երեք հարյուր տրապիզոնցի թուրքեր երկու օրենք կընդունեն կարդինալների դեմ,
Եվ նրանց սարսափի մեջ կդցեն, այնուհետև հավատը կվերահաստատվի։

ԼԵՀ ՊԱՊԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԸՆԴԴԵՄ ԿԱՐՄԻՐՆԵՐԻ։

VI, 49

Ծագումով Լեհաստանից մեծ Պապը
Մինչև Դանուբի ափերը (Սև ծով) ետ կմղի նրանց, ովքեր հաճառորեն կհետապնդեն քրիստոնյաներին,
Եվ ովքեր պատերազմի միջոցով նրանց կթալանեն ու կկողոպտեն,
Նա կհատուցի նյութական վնասների դիմաց և կարմիրներից 100.000 հոգի կբանտարկի։

ՔԻՄԻԱԿԱՆ ԶԵՆՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ։ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ։ ԻՏԱԼԻԱՆ ԱՎԵՐՎԱԾ։

IV, 58

Արցունքները կոկորդը կքերեն։ Իտալիան կոռոգվի մարդկային արյունով։

---

[1] Արևելքի յոթ երկրների բլոկը՝ ԽՍՀՄ, Ռումինիա, Լեհաստան, ԳԴՀ, Բուլղարիա, Հունգարիա, Չեխոսլովակիա։

Հեղափոխության մանդատի ռուս ղեկավարը
Կպատրաստվի իր վարչակարգը բերելուն։
Հանրապետության ղեկավարները կտարվեն Թուրքիա գերության։

ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ՄԱՐՍԵԼ ԾՈՎՈՎ

X, 88

Ցամաքազորը և տանկերը Մարսել կմտնեն գիշերվա երկրորդ հատվածի ընթացքում[1] (ժամը 21-ից մինչև 24.00-ն)
Ծովի կողմից՝ ամայացնելով ամեն ինչ։
Այնքան ողբ, հառաչ և արյուն կլինի,
Որ այդքան դաժան ժամանակ երբևէ տեսնված չի լինի։

ԿԱՐՄԻՐ ՎԱՐՁԱԿԱՐԳԻ ԵՐԵՔ ՏԱՐԻՆ ԵՎ 70 ՕՐԸ։ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ։

VI, 74

Ձախը կհասնի իշխանության։ Կբացահայտվի,
Որ հակառակորդները դավադիրներ են։
Առավել քան երբեք իր ժամանակը կհաղթանակի,
Բայց մեռնելու է նա դատապարտված երեք տարի և 70 օր անց։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐՋԸ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ։ Ժ.-Ժ. ՌՈՒՍՈՅԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՁԱՌԱՄՈՒԹՅՈՒՆԸ։

I, 7

(Փրկիչը) ուշ կհասնի, (վարչակարգի) դատաստանը կիրագործվի,

---

[1] Լատինացիները գիշերվա չորս բաժանումներ էին առանձնացնում. առաջինը սկսում էր ժամը 18.00-ից մինչև 21.00-ն, երկրորդը՝ 21.00-ին և ավարտվում էր կեսգիշերին՝ 24.00-ին։

(Պատմության) քամին հակառակ կփչի, և փաստաթղթերը խլված կլինեն։
Տասնչորս դավադիրներ մի կուսակցության՝ զառամությունը երևան կբերեն Ժան-Ժակ Ռուսոյի գաղափարների (սոցիալիզմի գաղափարը)։

ԿԱՐՄԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՎԱԽՃԱՆԸ։ ԴԱՎԱԴԻՐՆԵՐԸ։

V, 17

Գիշերով անցնելով մի նեղուցի մոտով,
Որ հսկողության տակ է Կիպրոսի ղեկավարի,
(Հակառակորդի) առաջնորդը կտապալվի, երբ կփախչեն ուժերն իր
Ոնի երկարությամբ· այդ ժամանակ դավադիրները կսպանեն նրան։

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

— 5-րդ Հանրապետության վախճանը և Նոստրադամուսի մարգարեության իրականացումը 1999 թվին։
— Ռուսական ուժերի անկումը մուսուլմանական ուժերի առաջ։
— Մուսուլմանների պարտությունը Ադրիատիկական ծովում։
— Տրապիզոնի գրավումը իրանական զորքերի կողմից։
— Նավատորմ՝ խորտակված Կարմիր ծովում։
— Մուսուլմանական առաջնորդի մահը Կարմիր ծովում։
— Ռուսաստանն ու Թուրքիան։
— Արևելյան Եվրոպայի յոթ երկրների անկումը։
— Իսպանիայի արքան ընդդեմ մուսուլմանական զորքերի։
— Զորքերի խոշոր կուտակում Իրանա—հայկական սահմանին։
— Պատերազմի երեք տարին և յոթ ամիսը։
— Համընդհանուր նվաճման երկու տարին։
— «Կայսրությունը՝ փլուզված»։
— Մարսելի ազատագրումը։

— Հարավ—արևմուտքի աղատագրումը ամերիկացիների կողմից։
— Օքսիտանիայի Հանրապետության հռչակումը։
— Կոմունիստների ուժերի ջախջախումը Թուլուզում։
— Կարմիր շարժումները Հարավ—արևմուտքում։
— Հեղափոխական շարժումները Թուլուզում։
— Մուսուլմանական զորքերի կանգնեցումը Դրոմում։
— Մուսուլմանական զորքերի պարտությունը։
— Ռումինիայի, Անգլիայի, Լեհաստանի և Արևելյան Գերմանիայի միությունը։
— Մուսուլմանական զորքերի նահանջը Թունիս։
— Ռուսական զորքերի ջախջախումը Ալպերում (Շամբերիում)։
— Վերջնական հաղթանակ Հայաստանում։
— Պատերազմի ավարտը նոյեմբեր ամսին (1998 թ.)։

5-ՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 20 ՏԱՐՈՒՑ ՔԻՉ ԱՎԵԼԻ։ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄԻՆՉԵՎ 1999 Թ.։ ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 1999 Թ.։

I, 48

Հանրապետական իշխանության 20 տարուց հետո[1] մեկ ուրիշը
Կհաստատի միապետություն մինչև յոթերորդ հաղարամյակը[2]։
Այն ժամանակ, երբ Բուրբոնը դժբախտություն կտեսնի,
Մարգարեությունն իմ ավարտված ու կատարված կլինի։

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՆ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՋԱՏԱԳՐՄԱՆ ՀԵՆԱԿԵՏ։ ՄԱՐՏԵՐ ՀԱՐԱՎ—ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ ԵՎ ԼԱՆԳԵԴՈՔՈՒՄ։

X, 5

Տառնում մի նոր կուսակցություն ծնունդ կառնի,

---

[1] 5-րդ հանրապետության սկիզբը՝ 1959 թ. սեպտեմբեր, վերջը՝ 1995 թ. սեպտեմբերից ոչ ուշ։

[2] 1999 թ.։

Հետո մի նոր Արիանոս, սկսած Լիսաբոնից՝ Պորտուգալիայում,
Իր հետքերը կվերացնի մինչ Կարկասոն ու Թուլուզ,
Երբ նոր առաջնորդը առաջ կբերի աղետ Լորագեում։

ՌՈՒՍ—ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՓԼՈՒԶՈՒՄԸ։

III, 95

Կտեսնեն մուսուլմանական օրենքի անկումը,
Հետո՝ անկումը շատ ավելի գայթակղիչ մեկ այլ օրենքի[1]։
Առաջինը Ռուսաստանը կփլուզվի
Եվ կհրապուրվի (ֆրանսիացիների) լեզվով ու բարեշնորհությամբ։

ՌՈՒՍ—ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԾՈՎԱՅԻՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ։ ՄԵԾ ՊԱՊԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ։

V, 44

Ծովի վրա խորհրդային ուժերը կմիանան մուսուլմանների հետ,
Որոնք խաղաղությունը կվերդովեն։
Ցասումն ու ագահությունը կմիավորվեն Եկեղեցու դեմ։
Մեծ պապին աջակցող բանակը կկրկնապատկվի։

ԽՈՇՈՐ ՄԱՐՏԵՐ ՍԵՎ ԾՈՎՈՒՄ։ ԻՐԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ։ ԱՐԱԲՆԵՐԻ ԾՈՎԱՅԻՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԻԱՏԻԿԱԿԱՆ ԾՈՎՈՒՄ։

V, 27

Սև ծովից ոչ հեռու պատերազմի կրակով ու զենքերով
Տրապիզոնը կնվաճեն զորքերը Իրանի։

---

[1] Կոմունիստական օրենքը։

Նեղոսի ափն ու Հունաստանը կդողան Բուրբոնի ճարպկության պատճառով,
Որ Ադրիատիկական ծովը կծածկի արյունով արաբական։

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Նախանշան 8, հունիս

Երբ Զրհոսի դարաշրջանը մերձենա, սատանան էլ շուտ գալով, կհեռանա,
Եվ խոշընդոտ կհարուցվի մեծ պատերազմի կրակի առաջ՝ Ռուսաստանից մինչ ամբարտավան երկրները մուսուլմանական,
Եվ մարի ազատություն Արևմուտքը կունենա։

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ։ ԱՐԵՎԵԼՔԻ ՅՈԹ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ։

IV, 50

Արդարությունը արևմտյաններին կկառավարի,
Երկնքում ու երկրի վրա միապետությունը կիշխի,
Բայց Ասիայի ուժերը կործանված չեն լինի,
Եվ յոթ երկրները[1] հիերարխիայի մեջ կմնան։

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ։ ԱՍՈՒՊԱՅԻՆ ԱՆՋՐԵՎ ՅԱՄԱՔՈՒՄ ԵՎ ԾՈՎԻ ՎՐԱ։ ՎԱՐՇԱՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՅՈԹ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ։

II, 18

Հանկարծահաս և սրընթաց մի նոր հեղափոխություն (Իր առաջխաղացման մեջ) երկու բանակները կտրուկ կփոթորկի։
Երկնքից ընկած հալվող ասուպները ծովը կծածկեն մանրախիճով

---

[1] ԽՍՀՄ, ԳԴՀ, Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա, Չեխոսլովակիա, Բուլղարիա։

Եվ ցամաքում ու ծովի վրա առաջ կբերեն անկումը յոթ երկրների։

ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ։

V, 80

Գեղեցկախոս անձը կմոտենա մեծ Թուրքիային,
Մուսուլմանական դաշինքը քայքայված կլինի.
Մուսուլմանական երկու օրենքներից մեկը[1] աչքաթող կարվի.
Մուսուլմանների ու ֆրանսիացիների միջև անընդմեջ հուզումներ կլինեն։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։ ՄԱՐՏԵՐ ԱԼՊԵՐՈՒՄ։

V, 50

Երբ բուրբոն եղբայրների[2] ժամը հասնի,
Նրանցից մեկը[3] Իտալիան կնվաճի։
Լեռները[4] կգրգռան, դեպի Իտալիա անցումը բաց կլինի։
Խաղաղությունը կուշանա Հայաստանում եղող ուժերի պատճառով։

ՄԵՆԱԹԻՎ ԶՈՐՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ։ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ։

III, 31

Տարածքների վրա Իրանի, Արաբիայի և Հայաստանի
Երկու խոշոր բանակներ կմիավորվեն, բանակը կկուտակվի
Իրանա—հայկական սահմանին, Արաքսի ափին,

---

[1] Շիաների մասին է։
[2] Ֆրանսիայի և Իսպանիայի թագավորները։
[3] Ֆրանսիայի արքան։
[4] Ալպերը։

Հետո մուսուլմանական մեծ առաջնորդի զինվորները գետնատարած կլինեն։

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 3 ՏԱՐԻ ԵՎ 7 ԱՄԻՍ։ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՎԶՈՒՄԸ։ ՀԱՂԹԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ։

IV, 95

Երկու անձինք, որոնց թողնված կլինի իշխանությունը,
այն կպահեն կարճ ժամանակ։
Պատերազմը կշարունակվի երեք տարի և յոթ ամսից մի
քիչ ավել։
Վարշավայի պայմանագրի երկու Հանրապետություններ
կապստամբեն (ԽՍՀՄ-ի) դեմ,
Եվ կրտսերը[1] հաղթող կլինի Հայաստանում։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԸՆԴԴԵՄ ԽՍՀՄ-ի։

V, 61

Մեծ (միապետական իշխանության) ժառանգորդը
Իր իշխանության սկզբում իրեն կենթարկի Իտալիան,
Բոլորին ԽՍՀՄ-ում սարսափի մեջ կդցի
Եվ պատերազմը կհասցնի մինչև Մոն-Սենի։

ԲՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՋԱԽՋԱԽՈՒՄԸ ՇԱՄԲԵՐԻՈՒՄ ԵՎ ՄՈՐԻԵՆՈՒՄ։

X, 37

Բուրժե լճի մոտ մեծաթիվ զորքեր կհավաքվեն և կվերախմբավորվեն
Մենմելթանի մոտ։ Չկարողանալով ավելի հեռուն գնալ՝
Շփոթահար ռազմական առաջնորդները նախագծեր
կկազմեն

---

1 Ֆրանսիայի արքան՝ Իսպանիայի արքայի համեմատությամբ։

Ու կջախջախվեն Շամբերիում ու Սեն-Ժյուլիեն
դը Մորիենում։

ՀԵՏՁՐԱՎՈՒՄ ԲԱՐՍԵԼՈՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՆԵՏԻԿ։ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ։ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԹՈՒՆԻՍ։

IX, 42

Բարսելոնից ու Ջենովայից մինչև Վենետիկ,
Սիցիլիայից մինչ Մոնակո դարշահոտություն կիշխի,
Մուսուլմանական բանակը կհետախուզվի
Եվ հեռու կվտարվի մինչև Թունիս։

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ԶԱԽՋԱԽՈՒՄԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ։ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱԼԱԾՅԱԼՆԵՐ։ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ։

IX, 100

Մի ծովամարտ գիշերը կշահվի, և պատերազմը կխորտակի
Արևմուտքի[1] *նավատորմը։ Մի նոր կարմիր բանակ*
Վատիկանում արյուն կհեղի, պարտվածները կենթարկվեն
շարշարանքների,
Բայց ի վերջո հաղթանակը ձեռք կբերեն նոյեմբերին։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՆԵՐԻՑ ՎԵՐՋԻՆՆ ՈՒ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆԸ՝ 1995—1999 ԹԹ.։

Այս արքային նոստրադամուսը տալիս է մի շարք անուններ, տիտղոսներ ու բնութագրություններ, որոնք բոլորն էլ համընկնում են օրինականության գաղափարի հետ։

1 ԿՀԻՐԵՆ (Ֆր. Շիրեն)։ ՀԵՆՐԻԿ-ի գրաշրջությունն է։ սրա լատիներենն է՝ Հենրիկուս, Հենրի կամ ֆրանսերեն՝ Անրի։

2 Մեծ ԼոբրաՆ կամ Ֆեբուս («արև»)։

---

[1] ԱՄՆ-ի։

3 ԲԼՈՒԱՅԻ արքա. Բլուայի կոմսերը ծագում էին Հյուգ Կապետի ընտանիքից։
4 ԱՔԱՂԱՂ. առաջին մեդալը, որի վրա աքաղաղ է պատկերված, հատվել է 1601 թ., Լուի 13-րդի ծննդյան առթիվ։
5 ՀԵՐԿՈՒԼԵՍ. ավելի հաճախ Հերկուլեսից ստեղծում են ուժի և քաջության տիպար։

Տեղեկանք՝

Նոստրադամուսի երկում Հենրի 5-րդ, կամ Մեծ Լորրան, կամ Ֆեբուս, Բլուայի արքա կոչված անձնավորությունը նույնանում է ժամանակակից Ֆրանսիայի քաղաքական գործիչներից մեկի՝ Լորրան Ֆաբիուսի հետ։ Ահա նրա քաղաքական գործունեության ցայժմ տեսանելի զծագրվող համայնապատկերը.

ԼՈՐՐԱՆ ՖԱԲԻՈՒՍ

— 1984 թ. հուլիսի 17-ից Ֆրանսիայի վարչապետ։
— 1988 թ. հունիսի 23-ից Ֆրանսիայի ազգային խորհրդի նախագահ։
— 1989 թ. մարտի 21-ից նշանակվում է եվրոպական երկրների ընտրություններում սոցիալիստական թևի ղեկավար։ Նույն թվականի հունիսի 18-ին կայացած Համաեվրոպական ընտրություններում առաջադրված վեց թեկնածուներից նա գրավում է երկրորդ տեղը (23,61%), առաջին տեղը զիջելով Վ. Ժեսկար դ'Էստենին (28,87%), բայց և զգալիորեն կտրվելով իր ետևից երրորդ տեղում ընթացող Լը Պենից (11,73%)։

— 1992 թ. հունվարի 9-ից՝ նաև Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության առաջին քարտուղարն է։ Այսպիսով նա այդ պաշտոնում չորրորդ տիտղոսակիրն է՝ 1971 թ. Էպինայում Սոցիալիստական կուսակցության հիմնադրումից ի վեր։ Այս պաշտոնում նա հաջորդել է Ֆրանսուա Միտերանին, Լիոնել Ժոսպենին և Պիեռ Մորուային։ Կարծես ընդառաջ գնալով միասնական Եվրոպայի ու «Աշխարհի» ղեկավարը լինելու Նոստրադամուսի կողմից իրեն վերագրված առաքելությանը՝ Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության նորընտիր ղեկավարը այդ պաշտոնը ստանձնելիս ի լուր ամենքի երդվելու պես հայտարարեց. «Ես կլինեմ բոլորի առաջին քարտուղարը», մի բազմախոստում ու մարգարեաբար արված հայտարարություն, որը վերջին ժամանակներս չի իջնում Ֆրանսիայի առաջնակարգ պաշտոնաթերթերի ճակատներից։ Ու թեև Լորրան Ֆաբիուսը Միշել Ռոկարին խոստացել է առաջիկա, 1995 թ. նախագահական ընտրություններում ամեն կերպ նրան աջակցելու իր պարտավորվածության մասին, բայց ամեն ինչից երևում է, որ ինքն էլ հենց կհավակնի այդ պաշտոնին, նկատի ունենալով օրավուր աճող նրա ժողովրդականությունը։

— Նրա գալուստը Հռոմ։
— Պատերազմ Լիբիայի դեմ։
— Ֆրանսիայի հետգրավումը՝ սկսած Իսպանիայից մինչև Իտալիա։
— Նրա հաստատվելը Ավինյոնում՝ նոր մայրաքաղաքում։
— Պատերազմ Սև ծովում։
— Մեծ Լորրանը և Սևրի պայմանագիրը։
— Նա խաղաղեցնում է ֆրանսիացիներին։
— Կարմիր բանակի պարտությունը Իտալիայում։
— Ռուս-մուսուլմանական ուժերի պարտությունը Ալպերում։
— Նրա թագադրումը Ռեմսում։
— Նա պաշտպան է կանգնում կաթոլիկ եկեղեցուն։
— Արևմուտքի աղատագրումը մինչև Իսրայել։
— Նրա ներկայությունը Եգիպտոսում։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ՄՈՒՏՔԸ ՀՌՈՄ։ ՊԱՊԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ԴԱՇԻՆՔԸ։

VI, 28

Մեծ ֆրանսիացին Հռոմ կմտնի՝
Բերելով բազում աքսորյալների, հալածյալների։
Մեծ պապը ապաստան կտա յուրաքանչյուրին,
Ով Ալպերում կաջակցի Ֆրանսիայի արքային։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԸՆԴԴԵՄ ԼԻԲԻԱՅԻ։ ՀԵՏԱՊՂՆԴՈՒՄ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՋԻԲՐԱԼԹԱՐ։

V, 13

Մի մեծ զայրույթով բռնկված՝ Հռոմից դարձող արքան կգա
Մուսուլմանական զորքերի կողմից կեղեքված Բելգիա։
Զայրույթի ու ցասման մեջ նա լիբիացիներին հետ կշպրտի
Եվ Հունգարիայից մինչև Ջիբրալթար նրանց կհետապնդի։

ԱՐՔԱՆ ԸՆԴԴԵՄ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ։ ՆՐԱ ԳԱԼՈՒՍՏԸ ՊՐՈՎԱՆՍ։

Վեցյակ 40

Այն, ինչ իր հայրը կյանքում չի տեսնի,
Պատերազմն ու հրդեհը նրան կմատուցեն,
Եվ անպտուղ հեղափոխության դեմ նա կկռվի։
Նա իր հորից օգուտ կքաղի
Եվ, հովանավորությամբ Հավերժական մեծ Աստծո,
Նա շուտով Պրովանսը կժառանգի։

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՆՈՐՎԵԳԻԱՅՈՒՄ, ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ, ԱՆԳԼԻԱՅՈՒՄ։ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԴԵՐՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։

VI, 7

Նորվեգիան, Ռումինիան և Մեծ Բրիտանիան
Վնաս կկրեն միավորված դաշնակիցներից[1]։
Հետո հռոմեական առաջնորդը՝ սերված ֆրանսիական արյունից,
Նրանց զորքերը անտառների միջով հետ կշպրտի։

ՍԱՈՒԴՅԱՆ ՏԱԳ[2] ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ։

VIII, 61

Երբեք նա միապետական իշխանության չի հասնի բացահայտումով այն բանի,
Ինչը (իր ակունքները) հասկանալի կդարձնի,
Ինչպես և բոլոր քաղաքները ազատագրված չեն լինի,
Երբ ՏԱԳ-ը արքային զինամթերք կտրամադրի։

---

1 Խորհրդային Միություն և Վարշավայի պայմանագրի երկրներ։

2 Արաբական ընկերակցություն, Ֆրանսիայի մեծ բարեկամը, որ ունի իր նստավայրը Ժնևում։

ԲԼՈՒԱՅԻ ԱՐՔԱՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՄՆԵՐԻ։ ԲԱԼԵԱՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐԻ ԹԱԼԱՆԸ։

VII, 10

Մեծ իշխանը՝ ծագումով Բլուայից, որ մի մեծ բանակի
Քաջ և անձնուրաց առաջնորդը կդառնա, ցամաքում և ծովում
(Կղեկավարի պատերազմը) ֆրանսիացիների և ռուսների միջև,
Որոնք Բարսելոնից անցած կլինեն Բալեարյան կղզիներ՝ դրանք թալանելու։

ՀԵՆՐԻ 5-ՐԴԸ՝ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՎԻՆՅՈՆՈՒՄ։

VIII, 38

Բլուայի արքան կկառավարի Ավինյոնում,
Որ ֆրանսիական ժողովրդի համար մայրաքաղաքի դեր կխաղա.
Ռոն գետը կթրջի իր կացարանի պատերը։ Հինգերորդը[1]
Կլինի վերջինը և կհասնի մինչև Նոլ[2]։

ԱՎԻՆՅՈՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ։

III, 93

Մայրաքաղաքն Ավինյոնում կզետեղվի,
Քանզի Փարիզը կործանված կլինի։
Տրիկատոնը պատճառ կդառնա մուսուլմանական զայրույթի։
Մայրաքաղաքի փոփոխությունը Լիոնին չի մխիթարի։

---

1 Հենրի 5-րդը։
2 Իտալիայում։

ԱՎԻՆՅՈՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ։

I, 32

(Ֆրանսիական) մեծ իշխանությունը կտեղափոխվի
Մի փոքրիկ վայր, որը շուտով կընդարձակվի։
Մի կոմսության շատ փոքրիկ վայր,
Որտեղ (արքան) իշխանությունն իր կհաստատի։

ՄԵԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ։ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ՝ ՊՐՈՎԱՆՍՈՒՄ։

IV, 21

Փոփոխությունը շատ տանջալի կլինի։ Գավառը[1] մայրաքաղաքի
Փոփոխության կհանի։ Վեհանձն ու իմաստուն (արքան)
(Թշնամուն) իր հնարամտությամբ վռնդելուց հետո կզբաղանա.
Ցամաքում ու ծովում նա ժողովրդի վիճակը կփոխի։

ՀԵՆՐԻ 5-ՐԴԸ ՀԱՂԹԱՆԱԿ Է ՏԱՆՈՒՄ։ ՀԵՆՐԻ 5-ՐԴԸ ԻՇԽՈՒՄ Է ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։

VIII, 60

(Հենրի 5-րդը) Ֆրանսիայում ու Իտալիայում կլինի։
Դեմքն առաջին։ Անգլիացիների ու փարիզեցիների համար
Ցամաքում ու ծովում արտակարգ անցքեր տեղի կունենան այս մեծ տան[2] միջոցով,
Եվ Լորրենը կորուստի կմատնի հրեշին[3]՝ նրա վրա գրոհելով։

---

1 Կամ Պրովանսը։

2 Բուրբոնների հարստությունը։

3 Ռուսական արջին։

ՀԵՆՐԻ 5-ՐԴԸ՝ ԿԱՊԵՏԻՆԳՆԵՐԻ ԵՎ ԳԻԶԵՐԻ ՀԵՏՆՈՐԴԸ։ ՆՐԱ ՌԱԶՄԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՎ ԾՈՎՈՒՄ։

VII, 24

Հանգուցյալ կապետինգի[1] հետնորդը դուրս կգա ստվերից
Եվ վերջ կտա (խորհրդային) ծովային զորությանը,
Որ կթունավորվի Գիզերի այս հետնորդի կողմից։
Մեծ Լորրենը կլինի երաշխավորը Սև ծովի սահմանների[2]։

ԼՈՐՐԵՆ 5-ՐԴԸ ՎԵՐՋ Է ԴՆՈՒՄ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ։

Նախանշան 76, հոկտեմբեր

Ցամաքային ու ծովային տերության դեսպանի պատճառով
Մեծ Կապետինգը բոլորի հետ կհաշտվի.
Լորրեն 5-րդը կկարողանա լսել նրանց առանց ոչինչ ասելու,
Միայն շատ ցանկալի կլինի, որ միանան իր տեսակետին։

ՎԱՏԻԿԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՀԵՆՐԻ 5-ՐԴԻ ԿՈՂՄԻՑ։

X, 27

(Հենրի) 5-րդի միջոցով, որ նաև մեծ և հզոր մի անհատ կլինի,
Վատիկանն իր գործունեությունը կվերսկսի՝ շնորհիվ ռազմական ուժի։
Կլեմենտ անունով մի պապ կընտրվի, երբ երկու գերմանացիներ հեռացված լինեն։
Իսպանիան ու պապությունը երբեք չեն տեսել ռազմական ուժի նման մի գրոհ։

---

[1] Լուի 16-րդի։

[2] Խոսքը մի պետության մասին է՝ Փոքր Ասիայի հյուսիսային մասում, Սև ծովի ափերին, այսօրվա Հայաստանի տարածքում (ծանոթագրությունը ըստ Ժան Շարլ դը Ֆոնտբրյունի)։ Հավանաբար մեկնիչը նկատի ունի 1920 թ. Սևրի պայմանագրի դրույթների կենսագործումը III աշխարհամարտի շեմին։

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ։ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀՐԿԻԶՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ԿՈՂՄԻՑ։

IV, 23

Մի բանակ, ծովն անցնելով, Թրակիան ու Մորեն կրակի
կմատնի,
Այդ վայրերում երկարատև հանդարտությունից հետո
Հերկուլեսը՝ (Ֆրանսիայի արքան),
Այդտեղ՝ մուսուլմանական նավահանգստում[1], հրդեհ կա-
ռաջացնի։

ՄԻ ԲՈՒՐԲՈՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ։ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐՋԸ։

Վեցյակ 4

Կապետինգների տոհմից, (Բուրբոնների) շուշանից[2] կծնվի
Մի շատ նշանավոր արքայազն՝ Պրովանսում հայտնվե-
լով միաժամանակ և վաղ, և ուշ,
Երբ արդարության ժամանակը հասած կլինի.
Կեղծիքի ու հեշտասիրության հաստատությունը իր ուժի
նվազումը կտեսնի
Առնականության քողով ծածկված հանրապետության իշ-
խանությունից հետո՝
Պահպանելու համար երջանիկ արյունը Բուրբոնի։

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԱՀԸ։ ՆՐԱ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՔԱՅԱԶՆՈՎ։

IV, 14

Պետության առաջնորդի հանկարծահաս մահը առաջ կբերի
մի փոփոխություն
Եվ իշխանության անցում մեկ ուրիշին՝ հայտնված միա-
ժամանակ և՛ վաղ, և՛ ուշ,
Այնքան երիտասարդ մեկին, չնայած իր ծագման շատ
հնությանը,
Որ հարկ կլինի ցամաքում և ծովում վախենալ նրանից։

---

[1] Ստամբուլում։

[2] Շուշանը Ֆրանսիայում թագավորական իշխանության խորհրդանիշ է։

ՀԵՆՐԻ 5-ՐԴԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ՂԵԿԱՎԱՐ։

VI, 70

Մեծ Հենրին աշխարհի ղեկավար կլինի։
Նա ավելի ու ավելի սիրված, ազդեցիկ ու պատկառազդու կլինի։
Իր բարի անունն ու գովքը կհասնեն մինչ երկինք,
Նա կբավարարվի միայն տիտղոսով հաղթողի։

ՀԵՆՐԻ 5-ՐԴ, ԱՐՔԱ ՖՐԱՆՍԻԱՅԻ։

IX, 41

Մեծ Հենրին Ավինյոնը կտիրի,
Երբ Հռոմից դառը նամակներ կստանա.
Դիվանագիտական մի միսիա Կանինոյից դուրս կգա,
Երբ Կարպենտրասը սև գեներալի կողմից գրավված կլինի՝ կարմիր սուլթանի համար։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ։ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ՝ ՀԵՆՐԻ ԱՐՔԱՅԻ ԴԵՐԻՆ։

IV, 34

Մի օտար երկրի[1] առաջնորդ, գերվելով,
Հենրի արքային կներկայանա՝ շղթայված իր ոսկով։
Իտալիայում, Միլանում նա պատերազմը տանուլ կտա,
Եվ իր ողջ բանակը կմատնվի կրակի ու գնդակոծման։

ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ԱՎՍՏՐԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ ԵՎ ՖՐԱՆՍԻԱ։ ՌՈՒՍՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԼՊԵՐՈՒՄ։

IV, 86

Ռուս-մուսուլմանական մեծ առաջնորդը ծարավը կհագեցնի
Դանուբի և Հռենոսի ջրերով։ Բնակիչները Ռոնի ափի
Սարսափից կդողան, առավել ևս՝ բնակիչները Լուարի ափի։
Հետո Ալպերի մոտ արքան նրան կսպանի։

---

[1] Ռուսաստանի՞։

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ։ ՄԵԾ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋԸ. ԽՍՀՄ։

Նախանշան 10, մայիս

Հասարակ ժողովուրդը[1] կցնցվի վեճերից ու դժտություններից
Կանանց և մեծ պատերազմի մահերի պատճառով։
Հանրապետությունը[2] կմեռնի։ Կտոնեն թաղագրումը,
Եվ ավելի մեծ հանրապետություններ[3] երկրից կվերացվեն։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԸ։

VIII, 18

Իր արևմտյան ծագումը պատճառ կդառնա իր մահվան[4],
Որն արդյունքը կլինի մի պահ առաջ վերածնված հին խառնաշփոթի,
Քանզի (Բուրբոնի) երեք շուշանները նրան այնպես կկանգնեցնեն,
Որ իր փրկված երեխան[5] կվերածվի կենդանի մարմնի։

ՀԵՏԳՐԱՎՈՒՄ ՄԻՆՉԵՎ ԻՍՐԱՅԵԼ։

Վեցյակ 30

Կարճ ժամկետում նա, ով դարման կբերի մեծ համաղետին[6],
Եվ հեղափոխության երկրները[7]՝ անհավասար բնույթով և կարգով,
Պատերազմը կհասցնեն Իսրայել, հետո նա կգրոհի նրանց դիրքերը
Բոլոր կողմերից, և կայսրությունը[8] կխոցվի պատերազմի կրակով,

---

1 Պրոլետարիատը։
2 Մի մեծ հանրապետություն՝ Մարիանը։
3 Օրինակ, ԽՍՀՄ-ը։
4 Հեղափոխության վախճանի մասին է։
5 Լուի 17-ը։
6 Երրորդ համաշխարհային պատերազմ։
7 Արևելքի երկրներ։
8 Խորհրդային։

Որը, բոցավառվելով, Ֆրանսիայում վերջ կդնի
Քաղաքական ճառերի վարչակարգին։

ՄԵԾ ՀԵՆՐԻՆ ԵՎ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԸ։ ԻՍՊԱՆԱԿԱՆ ՄԻ ԲԱՆԱԿ՝ ԻՍՐԱՅԵԼԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ։

VIII, 54

Միության մի դաշնագրի առիթով մեծ Հենրին վեհանձն դիրք կբռնի
Մուսուլմանների հանդեպ։ Սեն-Քենտենն ու Առռասը կազատագրվեն
Իր ծովազնացության ընթացքում։ Եվ պատերազմական մի երկրորդ գործողություն
Կկատարվի Իսրայելում իսպանացիների կողմից։

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԱՐՔԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ։ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ։ ԱՆԳԼԻԱՅԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ։

VI, 58

Երկու արքաների[1] միջև, որոնք մեկը մյուսից հեռու կլինեն,
Երբ Բուրբոնը Կիսալուսնի ուժերի փառքը[2] կխամրեցնի,
Կլինի մի մեծ մրցակցություն՝ նրանց ոչ արժանի,
Երբ Բրիտանական կղզիներն ու Իտալիան կազատագրվեն։

ԻՏԱԼԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ԿՈՂՄԻՑ։ ՆՐԱ ՊԱՅՔԱՐՆ ԸՆԴԴԵՄ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ։

IV, 77

Ֆրանսիայի արքան խազաղություն կվերադարձնի Իտալիային՝
Զարգելով մուսուլմաններին. երկրները կմիավորվեն։
Աշխարհը կունենա մեկ քրիստոնյա արքա, որը կխնդրի իրեն թաղել Բլուայում՝
Ծովերից մուսուլմանական նավատորմերը հետ մղելուց հետո։

---

[1] Ֆրանսիայի և Իսպանիայի

[2] Հզորությունը։

ՀՈՎՀԱՆՆԵՍ—ՊՈՂՈՍ 2-ՐԴԻ ՀԵՏՆՈՐԴԸ։ ԴԱՇԻՆՔ ՊԱՊԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ՄԻՋԵՎ։

Վեցյակ 15

Երբ Եկեղեցու նավի մի նոր առաջնորդ կընտրվի,
Երկար ժամանակ կտեսնեն առկայծելն այս լուսատու ջահի,
Որ աշխարհում ծառայում է որպես խորհրդանիշ կյանքի։
Այս դարաշրջանում բանակները իր անվան շուրջ վերամիավորված կլինեն
Եվ միավորված Ֆրանսիայի արքայի զորքերին, որի մասին կհիշեն
Արևելքի, արաբական ու աֆրիկյան երկրներում և Ամերիկայում։

ՎԵՃ ԵՐԵՔ ՄԵԾԵՐԻ (ԱՄՆ—ՌՈՒՍԱՍՏԱՆ—ՉԻՆԱՍՏԱՆ) ՄԻՋԵՎ։ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԸ։

Նախանշան 44, հոկտեմբեր

Այստեղ[1] իր իշխանությունը կավարտվի։
Երեք մեծ տերությունները[2] մեքենայություններ կանեն,
Եվ Բուրբոնը հեռու կլինի։ Երեքից մեկը[3] գաղտնի ծրագրեր կմշակի
Մյուս երկուսի դեմ և, հոկտեմբերի վերջին, նրա արարքները կտեսնեն։

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԸ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ։ ՄԵԾ ԱՐՔԱՅԻ ՄԱՀԸ։

VIII, 5

Կաթոլիկական եկեղեցին կտեսնեն փայլուն ու պատվելի.
Հոլանդիայում ու Պիկարդիայում պատարագներ կմատուցվեն։
Շվեյցարիայում (Լյուցեռնում) կրոնական գաղափարախոսությունը կփոխեն,
Երբ մեծ արքան կմեռնի։

---

1 Ֆրանսիայում։

2 ԱՄՆ, Ռուսաստան և Չինաստան։

3 Չինաստան։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՆ՝ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿԱՀԻՐԵՈՒՄ։

X, 79

Հին ճանապարհները կզարդարվեն Մեմֆիս (Կահիրե) անցնելու համար,
Որի բնակչությունը տեղեկացած կլինի
Հերալդիական շուշանի արքայի հզորության մասին,
Որը սարսափի մեջ կպահի բազմաթիվ երկրներ ցամաքում ու ծովում։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ։ ԲԵՌԼԻՆՅԱՆ ՊԱՏԻ ԱՆԿՈՒՄԸ։ ՌՈՒՄՆԵՐԸ ՓԱՐԻԶՈՒՄ ՅՈԹ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ։

V, 81

Արքան Կահիրեում կանի մի մռայլ նախազգուշացում (պատերազմի ավարտից)
Յոթ ամիս առաջ։ Արևելյան (Բեռլինի) (Եվրոպական) պատը կընկնի
Պատերազմի ամպրոպի ու կրակի տակ, ինչպես և թշնամիները,
Որոնք յոթ օր հարված էին հասցնում Փարիզին։

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐԸ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԸՆԴՀԱՐՄԱՆ ՄԵՋ։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՆ ԵՎ ՀԱՐԱՎ-ԱՖՐԻԿՅԱՆ ԲԱՆԱԿԸ։

Վեցյակ 29

Արևելյան Եվրոպան[1]
Կարող է պատրաստվել
Դիմադրավելու թշնամուն
Եվ լավ ամրապնդել իր բանակը,
Որովհետև Հարավային Աֆրիկայից եկած զորքերը
Նրան հանկարծակիի կբերեն։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ։

Վեցյակ 39

Նմանը չունեցող աղետի (ռուս) զինամատակարարը

---

[1] Վարշավյան պայմանագրի երկրներ։

Կհայտնվի նույն պահին, ինչ Բուրբոնը՝
Բարձրանալով մի միջօրեականով և հետամուտ լինելով
Հարավային Աֆրիկային ու Գերմանիային։
Ոչ մի միապետ[1] նման մի հարված երբեք չի հասցրել,
Բայց ավելի վատ ոչինչ չի կարող պատահել այս առաջ-
նորդի հետ։

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ։

— Նախավերջին պապը. նրա հաստատվելն ու մահը Ավենտին լեռան վրա։
— Նեռը։ Նրա ծնունդն Ասիայում։
— Նրա ընտրությունը։

ՆԵՌԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ՝ 1999—2026 ԹԹ.։

— Ներխուժումը Ֆրանսիա (Ռուան և Էվորքս)։
— Հենրի 5-րդի իշխանության վերջը։
— Իսրայելի տնտեսական քայքայումը։
— Դեղնամորթների և մուսուլմանների միությունը։
— Սպիտակամորթների և սևամորթների միությունը։
— Եվրոպայի անկումը։
— Իսպանիայի գրավումը։
— Կրոնական հալածանքներ։
— Հռոմի և Վատիկանի կործանումը։
— Վերջին պապի գերումը։
— Միապետության վերջը և կաթոլիկական Եկեղեցու կոր-
ծանումը։

ՍՈՒՐԲ ԱԹՈՌԸ ՓՈԽՈՒՄ Է ՏԵՂԸ։

VIII, 99

Երեք պետությունների առաջնորդների
Հզորության պատճառով
Սուրբ Աթոռը (Վատիկանից) կտեղափոխվի մեկ այլ վայր,
Եվ այնտեղ նորից պատարագ կմատուցեն։

---

[1] Օրինակ՝ Հիտլերը։

ՀՈՎՀԱՆՆԵՍ—ՊՈՂՈՍ 2-ՐԴԻ ՀԱՋՈՐԴԸ ՀԱՍՏԱՏՎՈՒՄ ԵՎ ՄԵՌՆՈՒՄ Է ԱՎԵՆՏԻՆ ԼԵՌԱՆ ՎՐԱ։

II, 28

Նախավերջին պապը կհաստատվի Ավենտին լեռան վրա
Եվ այնտեղ կմեռնի, Սուրբ Հոր գահը թափուր կմնա
Հեռվից եկած մի խենթ առաջնորդի պատճառով,
Որը հարկերից կազատի մի մեծ ժողովուրդ[1]։

ՆԵՌԸ՝ ՄԻ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆ ԿԱՄ ՉԻ ՎԱՆԱԿԱՆԻ ՈՐԴԻ։ ՆԵՌԸ՝ ԵՐԿՎՈՐՅԱԿ։

I, 95

Մի վանքի առաջ կգտնվի մի երկվորյակ՝ սերված ծեր մի վանականի
Ազնվական արյունից։ Իր աղմուկը իր որոշմամբ մեծ կլինի,
Նույնպես և իր լեզուն ու ձայնի ուժը, այնպես, որ կպահանջեն,
Որ կենսունակ երկվորյակը հասնի իշխանության։

ՆԵՌԻ ԾՆՈՒՆԴՆ ԱՍԻԱՅՈՒՄ։ ՆՐԱ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՄԻՆՉԵՎ ՖՐԱՆՍԻԱ։

V, 84

Նա կծնվի աղետից, մի անծայրածիր քաղաքում[2].
Եվ կծնվի մռայլ ու նենգ ծնողներից,
Երբ (Ֆրանսիայի) արքայի ուժը մեծարված կլինի,
Նա կցանկանա կործանել (Արևմուտքը) մինչև Ռուան և Էվրոքս։

ԱՍԻԱՅԻՑ ԵԿԱԾ ԱՐՇԱՎԱՆՔ ԻՏԱԼԻԱ ԵՎ ՖՐԱՆՍԻԱ։

II, 29

Ասիական առաջնորդը դուրս կգա իր երկրից՝
Անցնելու Ապենինյան լեռներն ու Ֆրանսիա հասնելու։
Նա կանցնի երկնքով, կանցնի գետերն ու լեռները
Եվ հարկ կվերցնի երկրներից։

---

[1] Ջիները։

[2] Ջինական կամ ճապոնական քաղաք։

ՕԴԱՅԻՆ ԳՐՈՀ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ՈՍՏԱՆԻ ՎՐԱ։ ԴԱԺԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅՈԹ ԱՄԻՍՆԵՐԸ։ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ՌՈՒԱՆ ԵՎ ԷՎՐՈՔՍ։ ԱՐՔԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ։

IV, 100

Արքայի պալատը կավերակվի մի հրթիռով,
Երբ պատերազմի արտացոլքը կթուլանա։ Մեծ կլինի պատերազմը՝
Շարունակվելով յոթ ամիս, և առաջ կբերի ժողովրդի մահ իր աղետներով,
Եվ ներխուժումը մինչև Ռուան և Էվրոքս արքայի անկումը առաջ կբերի։

ՆԵՌԻ ԾՆՈՒՆԴԸ։ ՍՈՎ ԵՐԿՐԻ ՎՐԱ։

III, 42

Երեխան կծնվի՝ կոկորդում երկու ատամ,
Իտալիայում[1] կլինի քարերի անձրև[2]։
Մի քանի տարի անց չի լինի ոչ ցորեն, ոչ գարի՝
Կշտացնելու մարդկանց, որոնք կմեռնեն քաղցից։

ՆԵՌԸ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆ։

X, 10

Ապականված սպանություններով ու նողկալի շարագործություններով՝
Մարդկային ցեղի մեծ թշնամին ավելի վատը կլինի,
Քան իր բոլոր նախորդները։ Պատերազմի արճիճով ու կրակով
Եվ հեղափոխությամբ նա արյուն կթափի անմարդկային եղանակով։

ՆԵՌԻ ԾՆՈՒՆԴԸ։ ԽԱՇԱՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ։ ՍՈՎԸ։ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՍԻԱՅՈՒՄ (ԿԱՄԲՈՋԻԱ—ՎԻԵՏՆԱՄ)։

II, 7

Կղզիներ աքսորված բազմաթիվ մարդկանց մեջ

---

[1] Տոսկանայում։

[2] Ռմբակոծություն։

Կծնվի մեկը՝ կոկորդում երկու ատամ։
Մարդիկ սովից կմեռնեն խաշամի պատճառով։
Մի նոր առաջնորդ նրանց նոր օրենքներ կպարտադրի։

ՆԵՌԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ։ ՆԱ ՀՆԱԶԱՆԴԵՑՆՈՒՄ Է ԱՄԵՆԱՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ։

VIII, 41

Մի նենգ մարդ կընտրվի առանց որևէ խոսքի.
Նա իրեն սրբի տեղ կներկայացնի՝ ապրելով հասարակ մի կենցաղով։
Հետո նա կընդարձակի իր բռնապետությունը՝
Ամենամեծ երկրներին պարտադրելով բացարձակ բռնադատված մի վիճակ։

ՆԵՌԸ։ ԱՍԻԱՅԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ՝ ՆԵՐՔԱՇՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ՝ 1999 Թ.։

X, 66

Անգլիական կառավարության ղեկավարը աջակցություն կստանա
Միացյալ Նահանգների[1] իշխանության կողմից, երբ ցուրտը կպնդացնի
Շոտլանդիայի հողը որպես քար, կարմիր առաջնորդների ղլխավորը
Կլինի մի այնպիսի անառակ Նեռ, որ նրանց բոլորին կներքաշի պատերազմի մեջ։

ՆԵՌԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ 27 ՏԱՐԻՆԵՐԸ՝ 1999—2026 ԹԹ.։

VIII, 77

Նեռը շուտով կոչնչացնի երեք երկրներ։ Պատերազմը, որ նա կվարի,
Կշարունակվի 27 տարի։ Ընդդիմացողները կսպանվեն
Եվ դերիները կաքսորվեն։ Մարմինների արյունը
Կկարմրեցնի ջուրը, երկիրը կծակծկվի հարվածներից[2]։

---

[1] Նոստրադամուսն օգտագործում է «Ամերիկա» ձևը։
[2] Հրթիռների և ռմբակոծությունների։

ԴԱՇԻՆՔ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԵՂՆԱՄՈՐԹՆԵՐԻ ՄԻՋԵՎ։ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎՐՈՊԱ։ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱԼԱԾԱՆՔԸ։

VI, 80

Մարոկոյի իշխանությունը կհասնի մինչ Եվրոպա, կրակի կմատնի
Նրա քաղաքներն ու կկոտորի բնակիչներին։ Ասիական մեծ առաջնորդը
Նոր բանակներ կուղարկի ցամաքով ու ծովով, դեղնամորթները՝ գոնատ կերպարանքով,
Կհետապնդեն քրիստոնյաներին՝ նրանց ոչնչացնելու նպատակով։

ԴԵՂՆԱՄՈՐԹՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՎ ՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՎ ԴԵՊԻ ԹՈՒՐՔԻԱ։

V, 54

Սև ծովից ու Չինաստանից մի առաջնորդ
Կգա մինչև Ֆրանսիա՝
Կտրել-անցնելով Ռուսաստանն ու Հայաստանը,
Եվ իր արնաներկ առագաստը կթողնի Թուրքիայում։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ՎԵՐՋԸ։ ԱՍԻԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ։

X, 75

(Բուրբոնյան արքան), որին այնքան սպառում էին,
Այլևս չի վերադառնա Եվրոպա։ Մի անհատ կհատնվի Ասիայում՝
Թալան անելու, և իշխանություն ձեռք կբերի
Ասիական բոլոր պետությունների վրա։

ՆԵՌՆ ԸՆԴԴԵՄ ՀԵՆՐԻ 5-ՐԴԻ։ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՆՋԸ։ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԱՀԱԲԵԿՁՈՒԹՅՈՒՆ։

IX, 50

Խաբեբան շուտ կհասնի զորեղությանն իր իշխանության՝
Հետևում թողնելով Լորենին։ Կոմունիստական իշխանությունը

Թուլացած կլինի երկու բախումների ընթացքում,
Եվ հարկ կլինի կրկին երկյուղել ու սարսափել մուսուլ-
մաններից։

ԲՈՒՐԲՈՆԻ ՎԱԽՃԱՆԸ։ ԻՍՐԱՅԵԼԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՅՔԱ-
ՅՈՒՄԸ։

Վեցյակ 34

Պետության ու կառավարության բոլոր ղեկավարները
Պատերազմի կբռնվեն։
Միմյանց դեմ կկռվեն եղբայրներն ու զարմիկները։
Բուրբոնյան երջանիկ արքայազնի գերագույն իրավարա-
րությունը կավարտվի։
Իսրայելի այնքան սիրված առաջնորդները
Մի հսկայական ու նողկալի գործողության պատճառով
առաջ կբերեն տնտեսական քայքայում։

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ
ԿՈՂՄԻՑ։

V, 55

Հարուստ Արաբիայի տարածքից ծնունդ կառնի
Մուսուլմանական մի հզոր առաջնորդ,
Որ նեղություն կպատճառի Իսպանիային՝
Գրավելով Գրենադան և առավել ևս Իտալիան՝ ծովով։

20-ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ՝ 1999 Թ.։

I, 51

Ի՞նչ փոփոխություններ առաջ կբերվեն պատերազմի
առաջնորդների կողմից՝
Նախքան շրջադարձը դեպի լույս և Ոսկեդար։
Այնուհետև, մի երկար դարից հետո, չարության ժամա-
նակը հետ կգնա։
Ի՞նչ հուզումներ Ֆրանսիայում և Իտալիայում։

ԱՍԻԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄՆ ԸՆՆԴԵՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՍԵՎԱ-
ՄՈՐԹ ԱՖՐԻԿԱՅԻ։

VI, 10

Կարճ ժամկետում Եկեղեցիները կվերագտնեն իրենց
փառքը։

Սպիտակամորթներն ու սևամորթները կստեղծեն մի միություն։
Կարմիրներն ու չինացիները կմիավորվեն նրանց դեմ, և երկիրը կընկնի
Հոգեգարության մեջ արյունահեղության, հիվանդության, սովի, պատերազմի և հեղափոխության պատճառով։

ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ԵՎՐՈՊԱ ՉԻՆԱՍՏԱՆՈՎ։

Նախանշան 40, հունիս

Մահ տարածած լինելու համար Արևելյան Եվրոպայի յոթ երկրները
Կճաշակեն մահացու հետևանքը։ Կկեղեքվեն ռմբակոծություններից, մրրիկներից,
Համաճարակից և թշնամիների ցասումից։ Ասիայի առաջնորդը
Փախուստի կմատնի բոլոր Արևմտյաններին ու կհնազանդեցնի իր նախկին նվաճողներին։

ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱ 1999 թ. ՀՈՒԼԻՍԻՆ։ ՕԴԱՅԻՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ։

X, 72

1999 թ. հուլիսին մի զարհուրելի առաջնորդ
Օդային ուղիներով[1] կգա հիշողության մեջ վերականգնելու
Անզումուայի մեծ նվաճողին։
Ավելի վաղ և հետո պատերազմը (Մարսը) հաջողությամբ կիշխի։

ԱՍԻԱՅԻՑ ԵԿԱԾ ԱՐՇԱՎԱՆՔ ԹՈՒՐՔԻԱ ԵՎ ԵԳԻՊՏՈՍ։ ԿԱԹՈԼԻԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱԽՃԱՆԸ։

V, 25

Արաբ առաջնորդը կսանձազերծի պատերազմ և ավերածություններ
Ընդդեմ միապետական գերագույն իշխանության,

---

[1] Համմ. Հայտնության ծղրիդների հետ։

Եվ Եկեղեցու իշխանությունը կտապալվի ծովային մի ներխուժմամբ։

Մոտ մեկ միլիոն զինվորներ կլինեն Իրանում, և տապալված Օձը (Սատանան)[1] կներխուժի Թուրքիա և Եգիպտոս։

ՀՌՈՄԻ ԵՎ ՎԱՏԻԿԱՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։ ՊԱՊԻ ԳԵՐՈՒՄԸ։

II, 93

Տիբերին շատ մոտ մահն է սպառնում։

Քիչ առաջ տեղի ունեցած կլինի մի մեծ հեղափոխություն։

Եկեղեցու առաջնորդը գերված կլինի և կմերժվի։

(Սեն-Անժ) ամրոցը և (Վատիկանի) պալատը ցնցումի մեջ կլինեն։

ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԸ։ ԿԱԹՈՂԻԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։

X, 55

Մարդիկ կշնորհավորեն միմյանց չարաբաստիկ միություններին համար,

Որոնք կուրախացնեն նրանց, բայց որոնք, վերջին հաշվով,

Աղետաբեր կլինեն։ Մարդիկ կարհամարհեն Կույս Մարիամին և Եկեղեցին։

Ֆեբուսը (միապետությունը)[2] կմեռնի և Եկեղեցին էլ ավելի թշվառ վիճակում կհայտնվի[3]

---

[1] Ակնարկում է Հայտնությունը, 12. «Եվ վար նետվեց մեծ վիշապը, այն առաջվա օձը, որ Բանսարկու ու Սատանա է կոչվում, նա վար նետվեց երկրի վրա, և իր հրեշտակներն էլ իր հետ վար նետվեցին»։

[2] Դարձյալ անուղղակի ակնարկ է Լորրան Ֆաբիուսի (Հենրի V-ի) և նրա վերահիմնած միապետական վարչակարգի մասին։

[3] Այստեղ հասկանալի է դառնում Նոստրադամուսի սարսափելի նախատեսությունը Սեզարին հղված նամակում. «Կուսակցականները, իշխողներն ու կրոնավորները այն կգտնեն այնքան անհավանական, որ չեն զլանա դատապարտելու այն, ինչ կտեսնվի ու կճանաչվի գալիք դարերում...»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 3
ՊՐՆ. ՄԻՇԵԼ ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍԻ ՆԱԽԱԲԱՆԸ ԻՐ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՈՒՂՂՎԱԾ ՍԵԶԱՐ ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍԻՆ . . 10
ԶԿՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՍԿԻԶԲԸ 20
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 22

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1995 թ. մարտ-1998 թ. նոյեմբեր)

ՄԻՆՉՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 27
Իսրայելական պետության վերականգնումը
Իսլամական հեղափոխությունը Իրանում
Ռուսներն Աֆղանստանում
Իրաքն ընդդեմ Արևմուտքի, նրա պարտությունը
Խորհրդա-ամերիկյան խաղաղասիրական բանակցությունների վիժեցումը
Հեղափոխությունը Իտալիայում
Ինչպիսի Եվրոպան և Չինաստանը

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ
ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ԻՏԱԼԻԱ 41
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ 47
ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ 48
ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ՝ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . 52
Հայաստանը արևմտա-քրիստոնեական խմբակցության կազմում ընդդեմ ռուս-մուսուլմանական դաշինքի
ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ 69
Հայ-արևմտաեվրոպական զինուժի միավորումը Հայաստանի տարածքում, հայ-իրանական սահմանի երկարությամբ, Արաքսի ափին՝ Վերջնական հաղթանակ Հայաստանում
ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՔԱՆԵՐԻՑ ՎԵՐՋԻՆՆ ՈՒ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆԸ՝ 1995—1999 թթ. 75
Մեծ Լորրանը և Սևրի պայմանագիրը
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐԸ ԵՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՐՄԱՆ ՄԵՋ 87
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱԽՃԱՆԸ՝ ՆԵՌԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ (1999—2026 թթ.) . . 88
Դեղնամորթների ու կարմրամորթների արշավանքը Հայաստանով ու Ռուսաստանով դեպի Թուրքիա ու Եվրոպա

Միշել դը Նոստրադամուս

Երրորդ համաշխարհային պատերազմը և Հայաստանը
Դուշակություններ, մարգարեություններ

Խմբագիր՝ Լ. Կ. Վիրաբյան
Նկարիչ՝ Ա. Ա. Ալեքսանյան
Գեղ. խմբագիր՝ Ն. Գ. Մովսեսյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Գ. Գասումյան
Սրբագրիչ՝ Ա. Ա. Ղարիբյան

Հանձնված է շարվածքի 27.05.1992 թ.։ Ստորագրված է տպագրության 25.06.92 թ.։ Չափսը՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ «Բարձր»։ Տպագրական 6 մամուլ։ Ծավալանակ 12000 Պատվեր 97։ Գինը պայմանագրային։
«Տապան» հրատարակչություն։
Երևանի պետհամալսարանի տպարան։ Երևան, Աբովյան փ. № 52։


LAO
TUN